Գեղամ Մ. Բադալյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Մաս յոթերորդ: Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան գավառները*

Բանալի բառեր– Ազնվացնոր, Տատիկ, Խիզանի գավառ, Խիզան-Գյավրոներ, Շենաձոր, Սպարկերտ, Մամռտանք, Վերին Կարկառ, Սղերդ քաղաք, Բարվարի, Ոզմ ավան, Շիրվան, Արվախ-Էրուհ

Շարունակելով Բիթլիսի (Բաղեշի) նահանգի նախաեղեռնյան ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունը՝ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում «հարավ-արևելյան գավառներ» պայմանական անվան ներքո միավորված մի շարք վարչամիավորներ: Դրանցում ընդգրկված են Բաղեշ քաղաքի շրջակա Ազնվացնոր, Տատիկ, Խուլթիկ-Նահիա և Շատախ գավառակները (թրք. nahiye), որոնք գտնվել են նահանգապետ-վալիի անմիջական կառավարման ներքո, Խիզանի գավառն ամբողջությամբ (վերջինիս կազմում մտել են Խիզան-Գյավրոներ, կենտրոնական, Շենաձոր, Սպարկերտ, Մամռտանք և Ներքին Կարկառ գավառակները), համանուն սանջակի կենտրոն Սղերդ քաղաքը, և վերջինիս կառավարչին (թրք. mutasarrıf) ենթակա Բարվարի (Բարվար), Շիրվան և Արվախ կամ Էրուհ գավառները:

1. Բաղեշի շրջակայքը

Բաղեշի շրջակայքի մեջ ընդգրկել ենք նահանգապետի անմիջական ենթակայության ներքո գտնվող **Ազնվացնոր** (**Գյոզալդարա**, թրք.՝ Güzel-dere), **Տատիկ**, **Խուլթիկ** կամ **Նահիա** և **Բայկան** կամ **Շատախ** (բրբռ. «**Շտկու գեղեր**») գավառակ-գյուղախմբերը, որոնք **Վերին Չուխուրի** և

*Ընդունվել է տպագրության 12.12.2016:

Դատվան–Ռահվայի հետ միասին կազմում էին **Կենտրոնական գավառը** (թրք.՝ Merkez Kazası)[1]: Դրանցից առաջինը գրավում էր քաղաքից արևելք՝ Բիթլիսի (Բաղեշ) և Վանի նահանգների սահմանագլխից սկիզբ առնող համանուն գետի ողջ վերին ավազանը: Երբեմնի զուտ հայաբնակ Ազնվաց–ձորի ազգացեղային նկարագիրը քրդերի 19–րդ դ. 2–րդ կեսից չդադարող ներթափանցման հետևանքով 20–րդ դարի սկզբին արդեն նկատելիորեն աղճատվել էր: Նորեկների թիվը գավառակի գյուղերում հատկապես մեծացավ համիդյան կոտորածներին հաջորդող տարիներին, երբ հեռացած հայերին փոխարինեցին հարևան **Կարճկանից** և **Կեցանից** տեղափոխված նորանոր քուրդ ընտանիքներ: Անուամենայնիվ, 1914 թվականին հայերը շարունակում էին կազմել Ազնվացձորի բնակչության մեծամասնությունը՝ 57,5 %–ը (2500 բն.): Գրեթե նույն պատկերն էր հարավից սահմանակից **Տատիկում** (զբաղեցնում էր **Ազնվացձորի** ձախակողմյան համանուն օժանդակի հովիտը): Հայ բնակչության (3300 անձ) տեսակարար կշիռն այստեղ կազմում էր շուրջ 60 %: Էլ ավելի հայաշատ էր **Փարխանդի գավառակը**: Վերջինիս բնակավայրերը սփռված էին **Բաղիշո ջրի** վերին ավազանի՝ քաղաքի անմիջական հարևանությամբ գտնվող ձորահովիտներում: 1914 թ. գավառակի 3100–ը գերազանցող հայ բնակչությունը կազմում էր 85%: Իր բազմամարդությամբ ոչ միայն Բաղեշի (Բիթլիս) գավառում, այլև ողջ նահանգում աչքի էր ընկնում նաև **Խուլթիկ** (**Ղուլթիկ**) ավանը, որը գտնվում էր քաղաքից շուրջ 7,5 կմ հարավ–արևելք՝ Ազնվացձորի ճյուղավորումներից մեկի հովտում: Պաշտոնական վարչական բաժանման համաձայն՝ այն **Նահիա** գավառակի կենտրոնն էր, սակայն հայկական սկզբնաղբյուրներում նշվում է որպես **Տատիկի** գլխավոր բնակավայր: Խուլթիկից հարավ՝ Բաղիշո ջրի և Ազնվաց ձորի միջագետքում տարածվող **Շատախ–Բայկանը,** (թրք.–քրդ. Bayki) ժամանակին հիմնականում նույնպես հայաբնակ էր: Սակայն հարավից (**Սղերդի շրջանից**) անընդմեջ շարունակվող ներթափանցման հետևանքով տեղի հայերի մեծագույն մասը հեռացել էր: Ըստ այդմ՝ արդեն 20–րդ դ. սկ. Բաղեշի (Բիթլիս) գավառում ձևավորվել էր յուրատեսակ ազգագրական սահմանազատում՝ ըստ հայաբնակ (հյուսիսային) և քրդաբնակ (հարավային) հատվածների: Առաջին աշխարհամարտի նախօրեին վերոհիշյալ գավառակների բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 24800–ի, որից ավելի քան 13000–ը՝ հայեր էին (շուրջ 53%–ը):

Նշված վարչամիավորների հայերը ծանր կորուստներ և զրկանքներ կրեցին համիդյան ջարդերի ժամանակ, իսկ 1915 թ. գրեթե ամբողջությամբ բնաջնջվեցին: Բավական է նշել, որ միայն Տատիկի 9 (ներառյալ Խուլթիկ ավանը) հայաբնակ գյուղերից փրկվել էր հազիվ 130–140 մարդ: Ի հետևանս Մեծ եղեռնի, Բաղեշի շրջակա գավառակները լիովին հայաթափվեցին և ամայացան:

1 Տես «ՎԷմ» 2016, N 2(54) և 3(55):

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
ա/ Ազնվաց ձոր (Գյոզալդարա)				
1	Ալբերդ (Հարբերդ)	Սբ Գևորգ, Սբ Կիրակոս		Եկեղեցիները կիսավեր էին:
2	Բալքան (Բալըկան)			Գյուղի եկեղեցին 1870-ական թթ. նորեկ քրդերը վերածել էին մզկիթի:
3	Ջնոներ			
4	Խարդ (Խարթ)	Սբ Գևորգ (Սբ Հովհաննես)		Գտնվում էր համանուն բերդի մոտ:
5	Կարբ	Սբ Սիմեոն		Եկեղեցում պահվել են 15 ձեռագիր և հնատիպ Ավետարաններ: Գյուղում կար ևս 1 ավերակ եկեղեցի՝ **Սբ Գևորգը**:
6	Կոտոմ (Կոտուում, Կոտմձկույթ)			Գյուղի **Սբ Սարգիս** եկեղեցին 1870-ական թթ վերածվել էր մզկիթի: Այսուր՝ **Սբ Անանիան**, եկվոր քրդերի համար փարախ էր ծառայում: Մոտակայքում գտնվել է միջնադարյան **Կոտոմ** ամրոցը:
7	Հանդ (Անդ)	Սբ Ստեփաննոս Նախավկա	1	Գյուղում եղել է ևս 2 ավերակ եկեղեցի՝ **Սբ Գևորգ** և **Սբ Սարգիս**:
8	Նել	Սբ Հովհաննես (Սբ Ստեփաննոս)		Գյուղում պահպանվել էին **Սբ Հարություն** վանքի և **Սբ Սարգիս** եկեղեցու ավերակները:
9	Որձակ	Սբ Աստվածածին, Սբ Խաչ		
10	Սակ	Սբ Գևորգ (Զորավար)		Գյուղում պահպանվել էր **Սբ Հովհաննես** կիսավեր վանքը: **Սակում** կար նաև **Թուխ Մանուկ** ուխտատեղի:
11	Սառնուս			Գյուղի եկեղեցին ավերակ էր: **Սառնուսից** շուրջ 2 կմ արևելք՝ **Ազնվացձոր** (Գյուզելդերե) գետի ձախ ափին գտնվող **Երեցթաղ** կամ **Իրիցթաղ** երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր հայկական ավերակ եկեղեցի:
12	Տաշտոփ (Դաշտոփ)	Սբ Հովհաննես		
13	Տոփ	Սբ Սարգիս (Սբ Կարապետ)	1	Եկեղեցում պահվել են ձեռագիր 3 Ավետարան և 1 Բժշկարան:
14	Օխնախ (Վանախ)			
բ/ Տատիկ				
1(15)	Բաս (Պաս)	Սբ Աստվածածին, Սբ Մարիամ		Պահվել են 3 ձեռագիր Ավետարաններ: Գյուղում կար ևս 2 ավերակ եկեղեցի՝ **Սբ Խաչ** և **Սբ Կիրակոս**: **Բասից** շուրջ 2 կմ արմ՝ **Ազնվաձորի Տատիկ** օժանդակի աջ ափին գտնվում էին **Սորվան** կամ **Սոլրեվան** (**Զորվան**) և **Հորու(ն)** երբեմնի հայաբնակ գյուղերը: Ի դեպ, վերջինիս **Սբ Մեսրոպ** եկեղեցին եկվոր քրդերը վերածել էին մզկիթի:
2(16)	Ծղկամ	Սբ Թեոդորոս (Սբ Թորոս)		Գյուղի մոտ պահպանվել էին **Սբ Աստվածածին** վանքի ավերակները: Հս-արևմտյան անմիջական հարևանությամբ գտնվող **Գոմս** երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր **Սբ Թադևոս** (**Սբ Մինաս**) կիսավեր եկեղեցին:
3(17)	Կալիոկ (Կլիուք)	Սբ Գևորգ		Գյուղում կար ևս 2 ավերակ եկեղեցի՝ **Սբ Սարգիս** և **Սբ Պետրոս**:

4(18)	Կերխ (Կեխր)	Սբ Աստվա-ծածին, Սբ Եղիշե		Գյուղից արևելյան հարևանությամբ՝ **Տատի-կի** ձախ ափին ընկած էին երբեմնի հայա-բնակ **Կշտոնիք** (**Քժտոնիք**) և **Կութ** գյուղե-րը: Առաջինում կանգուն պահպանվել էր **Սբ Կիրակոս** եկեղեցին, որը 1870-1880-ական թթ. ծառայում էր որպես կացարան քրդերի համար: Իսկ **Կութի Սբ Սարգիս** եկեղեցին վերածված էր մզկիթի:
5(19)	Մոճկոնք (Մոճկո-նես, Մշկունիք)	Սբ Աստվածածին (Սբ Ստեփաննոս), Սբ Հովհաննես		Գյուղում պահպանվել էին ևս 2 եկեղեցիների՝ **Սբ Գեվորգի** և **Սբ Երրորդության** ավերակ-ները: Գյուղին կից գտնվում էր **Սբ Աթանա-գինեի** կամ **Մոճկոնից** վանքը (կոչվել է նաև **Սրբոց Հայրապետաց**), որին կից 19-րդ դ. վերջին գործել է գիշերօթիկ դպրոց: Գյու-ղից արլ ձգվող **Հայկական Տավրոսի** ճյու-ղերը հնում կոչվել են **Մշկունյաց լեռներ** (հիշատակում է **Խորենացին**):
6(20)	Ոստին (Վեստին)	Ս Գևորգ, Սբ Լուսավորիչ		
7(21)	Սասիկ (Սասունք)	Սբ Աստվածածին, Սբ Վարդան		Գյուղը քրդերը կոչել են Sasunan: **Սասիկից** շուրջ 2 կմ արլ՝ **Տատիկ** գետակի աջ ափին, գտնվում էր երբեմնի հայաբնակ **Վերվան** գյուղը, ուր գոյություն ունեին 3 ավերակ եկեղեցիներ՝ **Սբ Աստվածածին**, **Սբ Եղիշե**, **Սբ Հակոբ**: Եվս մեկը՝ **Սբ Թորոսը**, եկվոր քրդերը վերածել էին մզկիթի: Այս ամենը խոսում է **Վերվանի**՝ նախկինում երևելի բնակավայր լինելու մասին: **Վերվանին** հս-արևմուտքից գրեթե կից գտնվում էր **Մեղրկեր** (օտար հորջորջմամբ՝ Meğrebiyan) գյուղը: **Սասիկից** շուրջ 2.2 կմ հս՝ արդեն **Ազնվաց ձորի** ափին երբեմնի հայաբնակ **Հզու** կամ **Հազո** գյուղն էր: Մեկ այլ բնակա-վայր՝ **Սիմեկը**, ընկած էր **Սասիկից** շուրջ 6 կմ հս-արևմուտք: Այստեղ 19-րդ դ. վերջին պահպանվել էին **Սբ Հակոբ** եկեղեցու ավե-րակները:
8(22)	Վանիկ	Սբ Գևորգ Ջորավար (Սբ Աստվածածին), Սբ Խաչ		Գյուղում ևս մի եկեղեցի՝ **Սբ Կիրակոսը**, ավերակ էր: 1578 թ. հազվագյուտ մի հիշա-տակարանի շնորհիվ պարզվել է գյուղի մոտով հոսող և **Ազնվաց ձոր** թափվող գետակի անունը՝ **Կեծկըդար,** որի ափին գտ-նվող **Արեգդեմ** հողամասը նվիրաբերվել էր **Սբ Գևորգին:**
գ/ Խուլթիկ (Նահիա) և Շատախ կամ Բայկան (Շտկու գեղեր)				
1(23)	Թոթով (Թութու)			Լիովին հայաթափվել է 19-րդ դ. 70-80-ական թթ.: Թոթովն ընկած էր Բաղիշո ջրի աջափնյակում: Գյուղից շուրջ 6 կմ արևելք՝ նույն գետի ձախափնյակում գտնվում էր **Շա-տախ** կամ **Կեղի** երբեմնի հայաբնակ ավա-նը (օտար հորջորջմամբ՝ Şetek): Վերջինից հարավ՝ **Բաղիշո ջրի** ձախ ափի երկայնքով գտնվում էին **Սիսոր** կամ **Սիզոր** (**Սևձոր**?) և **Ներքին Շեն** հայանուն գյուղերը: **Վերջինիս** մոտ կառուցված էր **Դուխան** իջևանատունը:
1(24)	Թութի (Թութեն)	Սբ Ստեփաննոս (կիսավեր)		

3(25)	Խուլթիկ (Ղուլթիկ, Կեղթիկ-Կեթիկ)	Սբ Գևորգ, Սբ Հովհաննես Ավետարանիչ	1	Հայկական սգբնաղբյուրներում նշվում է որպես Տատիկի գավառակի կենտրոն: Ավանում կար նաև ավերակ եկեղեցի՝ **Սբ Ստեփանոս** անունով: Խուլթիկում հայտնի էին **Սբ Հովհան** (**Սբ Հովհաննես Մկրտիչ** կամ **Սբ Կարապետ**), **Սբ Սարգիս** և **Սբ Սիմեոն** մատուռները, «**Թփերով խաչ**» ուխտատեղին: Դպրոցում ուսանում էր 400 աշակերտ: Ավանի անունը կապվում է պատմական **Աղձնիքի Կեթիկ** (**Կեղթիկ**) գավառի հետ: Այդ մասին անգամ հայտնի է 1621 թ. **Հայրապետ** (**Հերապետ**) վարդապետի ձեռքով գրված ուշագրավ մի հիշատակարան («... եմ **երկրաւ Բաղիշեցի**, ի **Ղուլթիկ** գեղջէ, որ աշխարհացուցաւն **Կեթիկ** ասի»): Ավանը Բիթլիսի նահանգի առավել խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. 500 տուն հայ բնակչով (2600-3000 անձ): **Խուլթիկը** հռչակված էր որպես Բաղեշի (Բիթլիս) գավառի արհեստագործական կարևոր կենտրոն, որի հայերը հիմնականում բրուտներ, կտավագործներ և բեհեզագործներ էին: Մեծ թիվ էին կազմում նաև դարբինները և կոշկակարները: Որոշ տվյալներով ավանի արհեստագործների ընդհանուր թիվը հասնում էր 550-600 մարդու: Ընդ որում, խուլթիկցիները **Բաղեշ** (**Բիթլիս**) քաղաքին արհեստագործական իրերով ապահովող հիմնական մատակարարողներն էին: Ավանի շրջակա գյուղերն ամբողջովին հայաբնակ էին մինչև 19-րդ դ. կեսերը: Քրդերի աստիճանական ներթափանցումը ծանր հետևանքներ ունեցավ **Խուլթիկի** գավառակի համար, որի բոլոր բնակավայրերը մինչև 1870-ական թթ. հայաթափվեցին: Նշված շրջանում հայկական եկեղեցիներ էին դեռ պահպանվել **Գորջան** կամ **Քորջան** (**Սբ Սարգիս**՝ վերածված մզկիթի), **Խումած** (**Սբ Հովհաննես**՝ վերածված մզկիթի), **Հևրիզ** (**Սբ Կիրակոս**, կիսավեր), **Մոսլկեր** կամ **Մոսուլիա** (**Սբ Գևորգ**, ավերակ) գյուղերում: Նախկինում հայաբնակ են եղել նաև **Ալաղը**(**Ալաղկ**) և **Արծվիքը** (**Արծվենք**), որոնք ընկած էին **Խուլթիկից** արլ:
4(26)	Շեն (Վերին Շեն, Բայկու Շեն)	Սբ Սարգիս		**Շենը** ժամանակին եղել է բազմամարդ բնակավայր, որի ապացույցն են գյուղում պահպանված ավերակ **Սբ Գևորգ** և **Սբ Կույս Մարիամ** 2 եկեղեցիները, ինչպես նաև մոտակայքում 1880-ական թթ. դեռ տեսանելի **Փրկչիվանք** երբեմնի մենաստանի մնացորդները: **Շենի** հվ-արևելյան կողմում հին բնակատեղի էր, որն, ավանդության համաձայն ժամանակին ունեցել է 500 տուն հայ բնակիչ, իսկ վերջինիս **Սբ Հարություն** «ավագ» եկեղեցին (թերևս՝ «մայր» եկեղեցի) հաճախել են նաև շենցիները: Դարձյալ գյուղի հարավակողմում ապառաժուտ վայրում տեսանելի էր քրդերեն **Qeleyê Zemani** («**Ժամանակաբերդ**») ավերակ ամրոցը:
5(27)	Սափ	Սբ Մարտիրոս		

6(28)	Սուրիմ			Ամբողջովին հայաթափվել է 19-րդ դ. 70-80-ական թթ.: Նույն ճակատագրին էին արժանացել նաև գյուղից 3-8 կմ հվ-արևելյան ուղղությամբ գտնվող և միմյանց կից **Եզնև** կամ **Հեզնև** (եկվորների կողմից հորջորջված Seyitava), **Խաչուկան** կամ **Խաչքուրկան** (քրդերի կողմից հորջորջված Xaçukan, թրք. Haçuyan, 1870-ական թթ. դեռ տեսանելի էին 2 հայկական եկեղեցիների ավերակները) և **Զագոնիս (**օտարների կողմից հորջորջված Enip՞**)** գյուղերը:
7(29)	Օլեք, Ներքին			Այս և հաջորդ նույնանուն գյուղերն ամբողջովին հայաթափվել էին 19-րդ դ. 70-80-ական թթ.:
8(30)	Օլեք, Վերին			Գյուղում պահպանվել էին **Սբ Գևորգ** (19-րդ դ. 70-ական թթ.՝ վերածված մզկիթի) և **Սբ Հարություն** (19-րդ դ. 70-ական թթ.՝ ավերակ) եկեղեցիները:
դ/Փարխանդ				
1(31)	Ամպ (Ամբ, Ամ)	Սբ Գևորգ		Նշանավոր էր գյուղի **Սբ Հակոբ Տյառնեբայր** ուխտատեղին: 1497 թ. գյուղում հիշատակվում է **Սբ Հակոբ Հայրապետ** եկեղեցին:
2(32)	Գոմք (Գոմս)			Գյուղը հայտնի էր իր **Տատրակաբնակ Սբ Աստվածածին** վանքով, որը կոչվել է նաև **Գոմց** կամ **Տատրկա վանք:** Ավանդության համաձայն՝ հիմնել է Սբ Թադևոս Առաքյալը: Ուշ միջնադարում Բաղեշի թեմի առաջնորդանիստն էր: Վանքին կից գործում էր դպրոց: **Սբ Աստվածածինը** կարևոր ուխտատեղի էր, ուր պահվում էին մի շարք մասունքներ (Սբ Կենաց փայտից կտոր, Սբ Բարսեղի աջը ևն): Գյուղի մոտ՝ Բաղիշո ջրի ձախակողմյան **Խոցերու** կամ **Խոսրովու ջուր** կոչվող օժանդակի ափին գտնվում էր կիսավեր **Կորճինաց Սբ Գևորգ** մենաստանը:
3(33)	Խմելջուր (Համեղջուր)	Սբ Աստվածածին (Սբ Հովհաննես), Սբ Անտոն		
4(34)	Խարտկող (Հարդգող)	Սբ Գևորգ		Եվս մեկը՝ **Սբ Սարգիսը**, ավերակ էր:
5(35)	Կորվու, Ներքին	Սբ Հեղինե		Մոտակայքում գտնվում էր **Սբ Ստեփաննոս** կիսավեր վանքը:
6(36)	Կորվու, Վերին	Սբ Հովհաննես (նախկինում՝ վանք), Մայր Աստվածածին (Սբ Գևորգ)	1	Որոշ տվյալներով 2 **Կորվուներն** ունեցել են շուրջ 1300 հայ բնակիչ:
7(37)	Հորմեզ (Հյուրմուզ)	Սբ Քրիստափոր Զորավար		Գյուղի եկեղեցու ամբողջական անունը՝ ըստ 1575 թ. մի հիշատակարանի: **Հորմեզի** և **Մարգորգների** միջև գտնվում էր **Ծակքար** նշանավոր ապառաժը, որի միջով անցնում էր **Բաղեշից** (Բիթլիս) **Սղերդ** տանող ճանապարհը:
8(38)	Մարգորգ (Մարգոկ), Ներքին			1567 թ. գրված մի Գանձարանի հիշատակարանում հիշվում է **Սբ Գևորգ Զորավար** եկեղեցին («ի **Բաղէշ** քաղաքի եզրն, ի գիւղս, որ **Մարգորգ** կոչի, ընդ հովանեաւ **Սբ Գէորգայ Զօրավարին** »): Նույն եկեղեցին հիշվում է նաև 1575 թ. մեկ այլ հիշատակարանում:

9(39)	Մարգորգ (Մարգոկ), Վերին	Սբ Ստեփաննոս (Սբ Կարապետ), Սբ Պողոս-Պետրոս(՞)		
10(40)	Ջլքան (Ճալրկան)			
11(41)	Մնդյան (Մնդիան)			Գյուղից շուրջ 4 կմ հս-արևելք գտնվող **Ճոկուզ** երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր 2 եկեղեցի, որոնցից **Սբ Գևորգը** նորեկները վերածել էին մզկիթի, իսկ **Սբ Ստեփաննոսն**՝ ավերված էր:
12(42)	Փարխանդ	Սբ Ատովմյանց	1	Եվս մեկ եկեղեցի՝ **Սբ Կիրակոսը**, կիսավեր էր: **Փարխանդի** մոտ տեսանելի էին **Սբ Հակոբ** վանքի ավերակները:

2) Խիզան-Գյավրոներ

Բիթլիսի (Բաղեշ) նահանգի **Խիզանի գավառը** (թրք. kaza) տարածվում էր Վանա լճի հարավային ափերին զուգահեռ ձգվող **Հայկական Տավրոսի** արևելյան ճյուղավորումները համարվող **Ռշտունյաց** կամ **Շատախի** լեռներից սկիզբ առնող **Կեցան գետի (**Արևելյան Տիգրիսի աջակողմյան վտակը) միջին ավազանում: Նույն գավառի ծայր հարավ-արևելյան փոքր հատվածն ընդգրկում էր Արևելյան Տիգրիս թափվող **Մամոտանք** (պատմ. **Միջա**, քրդ. Namran) գետակի հովիտը: Վերոնշյալ գավառի արևմտյան հատվածը՝ **Բուն Խիզանը** կամ ժողովրդի շրջանում «**Գյավրոներ**» կոչվող գավառակը (թրք. nahiye) ընդգրկում էր Կեցանի աջափնյակը: Իր հերթին այն կազմված էր 2 շրջանից. հյուսիսային՝ **Խորորս** (**Խորոզ**)-**Կարասու** կամ **Սև ջուր** և հարավային՝ **Խիզանիձոր** (Կեցանի համանուն վտակների անուններով): Սահմանակցում էր հյուսիսից, **Մշկունյաց** կամ **Կարեզյան** լեռներով՝ **Կարձկանի Կեցան** գյուղախմբին (Վանի նահանգ), արևելքից, **Կեցանի** հունով՝ **Շենաձորին** և **Սպարկերտին**, հարավից՝ **Շիրվանի Կառնի**, իսկ հարավ-արևմուտքից՝ **Էրուն** գավառակներին, հյուսիս-արևմուտքից՝ Բիթլիսի **Կենտրոնական գավառի Տատիկ** գավառակին: 16-րդ դ.-19-րդ դ. 1-ին կեսին Խիզանը՝ **Շենաձորի** հետ, եղել է Վանի նահանգի (թրք. eyâlet) կիսանկախ իշխանություններից (թրք. hükümet) մեկը, որի կենտրոնն էր **Խիզան** կամ **Հիզան** բերդաքաղաքը: Վերջինս Հարավային Հայաստանի բազմամարդ բնակավայրերից մեկն էր, որի բնակչությունը կազմում էին գերազանցապես հայերը (ավանդության համաձայն՝ 4000-5000 տուն կամ ավելի քան 20000 մարդ): Միաժամանակ Խիզանը հայ գրչության և մշակույթի կարևոր կենտրոն էր, ուր 17-րդ դ. կար 7 գործող սրբավայր՝ **Սբ Հարություն** վանքը և **Սբ Աստվածածին**, **Սբ Գևորգ** (գտնվում էր քաղաքի շրջագծի դուրս), **Սբ Գրիգոր**, **Սբ Հովհաննես Մկրտիչ**, **Սբ Սարգիս** և **Մարտիրոս**, **Սբ Ստեփաննոս** եկեղեցիները: Այդ պատճառով հայկական միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններում այն որպես կանոն հայտնի է որպես «յոթնխորանյան» քաղաք: Գրեթե զուտ հայաբնակ էին նաև գավառի՝ 4 տասնյակ գյուղերի մեծագույն մասը: Սակայն քրդական վաչկատուն ցեղերի չընդհատվող ներհոսքը և հարևան իշխանությունների

միջև ընդհարումները ծանր հարված հասցրին **Խիզան–Գյավրոնների** հայաբնակ բնակավայրերին: Աղետալի հետևանքներ ունեցավ նաև 1847–1849 թթ. քուրդ ցեղապետերի դեմ օսմանյան բանակի արշավանքը, որը փաստորեն ամայացրեց **Խիզան** բերդաքաղաքը (ամբողջովին անմարդաբնակ դարձավ 1860–1870–ական թթ.): Այս ժամանակ էլ Խիզանի վարչական կենտրոնը փոխադրվեց **Ներքին Կարասու** ավան (վերջինս կոչվել է նաև **Խիզան**): Պակասը լրացրեցին 1860–ական թթ. Մոկսի **Առվանց** (քրդ.՝ Ervaz) գյուղից տեղափոխված մոլլա Սայբաթուլլան՝ իր որդի, տխրահռչակ Ջալալեդդինի հետ, որոնց բարբարոսությունները հարկադրեցին հարյուրավոր հայ ընտանիքների հեռանալու բնօրրանից՝ հիմնականում **Բուլանուխ**, **Մանազկերտ**, մասամբ՝ **Մուշ,** ինչը, ի դեպ, բնորոշ է **Խիզանի գավառի** բոլոր մյուս գավառակների համար: Հայ բնակչության արտագաղթն էլ ավելի ահագնացավ համիդյան «զուլումի» տարիներին, իսկ 1895–1896 թթ. կոտորածներին զոհ գնաց 400–ից ավելի հայ (**Շենաձորի** հետ միասին): Մահվան սպառնալիքի ներքո վերապրած հայերը, թեկուզ ժամանակավորապես, ստիպված էին անգամ բռնի մահմեդականություն ընդունել: Այս ամենի հետևանքը գավառի հայ բնակչության տեսակարար կշռի էական անկումն էր: 1–ն աշխարհամարտի նախօրեին **Խիզան–Գյավրոներում** հայերի թիվը կազմում էր ընդամենը 2000 մարդ, այն դեպքում, երբ 1860–ական թթ. այն գերազանցում էր 5000–ը (հաշվարկը՝ ըստ **Մ. Նաթանյանի** տվյալների): 1915 թ. տեղի հայերը նոր արհավիրքներ տեսան՝ դարձյալ տալով ծանր կորուստներով: Նույն թվականի ամռանը կոտորածից փրկված ընտանիքները՝ հարևան գավառների հայրենակիցների հետ, ստիպված էին հեռանալու **Արևելյան Հայաստան** կամ ռուսական բանակի կողմից ռազմակալված Պարսկաստանի **Սալմաստ գավառ**: Վերջինիս գյուղերում ապաստանած ընտանիքները, այս անգամ արդեն 1918 թ., ենթարկվեցին նոր բռնագաղթի: Նրանց մազապուրծ փրկված խլյակները միայն հասան բրիտանական զինված ուժերի կողմից գրավված Իրաք:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Անդենց (Անդյանց)	Սբ Անանիա, Սբ Մինաս		
2	Բրունց (Բրոնիս)	եկեղեցի		
3	Դարոնց (Դարոնիս)	Սբ Գևորգ Ջորավար		Հիշվում է նաև **Սբ Աստվածածին** եկեղեցին:
4	Էկու (Հեկու, Այգեձոր)			Գյուղից շուրջ 3 կմ արմ՝ **Այգեձոր** գեղատեսիլ վայրում գտնվում էր նշանավոր **Սբ Գամաղիել Առաքելո** կամ **Սբ Եղիա** վանքը:
5	Խուպ (Խուփ)	Սբ Աստվածածին		
6	Խուպանց (Խոպան)			
7	Կարասու (Ղարասու), Ներքին	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս		Ավանդության համաձայն՝ ժամանակին ունեցել է 500 տուն հայ բնակիչ:
8	Կարասու (Ղարասու),Վերին	Սբ Գևորգ Ջորավար		

9	Հրիթ (Հայ Հրիթ, Խարիթյանց), Ներքին	Սբ Աստվածածին, Սբ Սահակ–Մեսրոպ		1850–1860–ական թթ. Խիզանի մեծ գյուղերից էր՝ ավելի քան 100 տուն հայ բնակչով: **Հրիթը** և **Շենը Խորորսի** շրջանի պահպանված հայաբնակ գյուղերն էին: Սակայն վերջինիս տեղանունները պարզորոշ ցույց են տալիս, որ այստեղ ևս ժամանակին գրեթե միատարր հայ բնակչություն է եղել: Նման գյուղերից էին **Արդասը**, **Գյուլփիկը** (<**Կողբք** կամ **Կողբիկ**), **Խորորսը** կամ **Խորոզը**, **Ծուղը** (քրդ. Ĉux կամ Çux), **Կապանը**, **Կուլաթը** (<**Կողթ**, **Գողթ**՞), **Հեզը** (**Իզ**) ևն:
10	Շեն	Սբ Ստեփան–նոս (Սբ Կիրակոս)	1	Եկեղեցում պահվել են **Ծաղիկ** և **Կարմիր Ավետարան** ձեռագրերը:
11	Փալասոր (Բարեձոր)	եկեղեցի (ավերակ)		1850–1860–ական թթ. Խիզանի մեծ գյուղերից էր՝ ավելի քան 100 տուն հայ բնակչով: Գյուղի հվ մասում՝ **Բարիձորում**, գտնվում էր **Յոթնկնորան Սբ Աստվածածին** կամ **Բարիձորի** (**Բարակաձորի**) վանքը: Բուն եկեղեցուն կից գտնվել են **Սբ Գևորգ**, **Սբ Մերկերիոս** և **Սբ Սարգիս** անուններով մատուռներ: Միջնադարյան հայտնի գրչության կենտրոն էր, սիրված ուխտատեղի: Վանքին կից գտնվում էր **Թաղիկ** անունով գյուղակը, որը հայաթափվել է 1895–1896 թթ. կոտորածների ժամանակ:

19–րդ դ. 60–70–ական թթ. ամայացած կամ հայաթափ եղած բնակավայրեր՝ **Ամփիս** (ուներ **Սբ Ստեփաննոս** անունով եկեղեցի), **Բեյթամին** կամ **Բեյթամուր** (ուներ **Սբ Հարություն** անունով եկեղեցի), **Խազրկան**(**ց**), **Խաչուկ** կամ **Խաչուկանց** (ուներ **Սբ Սահակ** անունով եկեղեցի), **Խիզան** բերդաքաղաք, **Կապան**, **Մեզրե** կամ **Մզրեն** (ուներ **Սբ Վարդան** անունով եկեղեցի), **Միջինթաղ** կամ **Միջթաղ** (եկեղեցին քանդվել էր Ջալալեդդինի հրամանով), **Փաթեր** կամ **Փաթյար** (եկեղեցին քանդել էին քրդերը), **Քելաման**, **Քորմաս** կամ **Քոլմաս**:

3) Շենաձոր

Շենաձորը, որը քրդերի կողմից կոչվում էր Durya Merwan, զբաղեցրել է **Ռշտունյաց** կամ **Շատախի** լեռներից հարավ տարածվող, նույն **Կեցան** գետի ձախակողմյան **Շենաձոր** կամ **Շինաձոր** վտակն ընդգրկող ձորահովիտը: Գավառակի սահմանները կազմում էին հյուսիսից և արևելքից՝ **Ներքին** (**Վարի**) **Կարկառը** կամ **Եղեգիսը**, հարավից՝ **Սպարկերտը**, արևմուտքից, **Կեցանի** հունով՝ **Խիզան–Գյավըռները**: Ինչպես նշել ենք, միջնադարում Շենաձորը մտնում էր Վանի նահանգի **Խիզանի իշխանության** մեջ: Գրեթե ամբողջությամբ զուտ հայաբնակ գավառակի բնակչության հիմնական զբաղմունքները դարբնությունն ու զինագործությունն էին (հռչակված էր մասնավորապես **Տի** գյուղը): 19–րդ դ. կեսերից քրդերի ներհոսքի ուժեղացումը թեև Խիզան–Գյավըռների նման ծանր հետևանքներ չունեցավ, սակայն որոշ գյուղեր ամբողջովին հայաթափվեցին (տե՛ս ստորև): Աղետալի էին սակայն 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ժամանակ Շենաձորում տեղ գտած քրդական վայրագությունները, ինչպես նաև 1895–1896 թթ. համիդյան կոտորածները, որոնց ընթացքում այստեղ ևս հայ բնակչությունը կրեց մեծաթիվ կորուստներ: Հենց այս շրջանից էլ **Շենաձո**–

ից սկիզբ առավ զանգվածային տեղափոխություն դեպի ավելի ապահով **Բուլանուխ** և **Մանազկերտ**: Սրանով հանդերձ Շենաձորում հայ բնակչությունն ընդհուպ մինչև Մեծ եղեռն կազմել է մեծամասնություն՝ մոտավոր հաշվարկներով 55-60 %-ը կամ շուրջ 3000 բնակիչ: Հարևան գավառակների նման 1915 թ. շենաձորցի հայերը ևս ենթարկվեցին կոտորածի: Փրկվածները մարտերով կարողացան անցնել **Մոկս**: Ն. թ. հուլիսին տեղի ունեցած վասպուրականցիների մեծ գաղթի ընթացքում վերջիններս հիմնականում տեղափոխվեցին Պարսկաստանի **Սալմաստ գավառ**, որտեղից 1918 թ. խուսափելով օսմանյան բանակի հարձակումից՝ անցան բրիտանական զինված ուժերի կողմից գրավված Իրաք:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ամապատ	Սբ Գևորգ (Սբ Սարգիս)		
2	Բարս (Փարս)	եկեղեցի (ավերակ)		
3	Եղունց (Եղվանց, Աղյան)			
4	Լի	Սբ Սահակ (Սբ Սարգիս)		1860-ական թթ. Շենաձորի առավել բազմամարդ գյուղն էր՝ շուրջ 100 տուն հայ բնակչով:
5	Խածուս (Հազուզ)	Սբ Աստվածածին (Սբ Գրիգոր)		
6	Խակև	Սբ Աստվածածին, Սբ Ստեփաննոս	1	
7	Խարխոց (Խարհոց)	Լուսապտուղ Սբ Սահակ (Սբ Երրորդություն, Երեք Խորան)	1	15-րդ դ. հիշվում է **Սբ Քրիստափոր** եկեղեցին: Եկեղեցում պահվել են ձեռագրեր (մասամբ՝ մագաղաթյա), Սբ Գևորգ և Սբ Քրիստափոր Ջորավարների, ինչպես նաև Սբ Սահակի մասունքները: Խարխոցում կար նաև մատուռ՝ **Թուխ Մանուկ** անունով: Գյուղը շրջապատված էր **Գրդիփոսեր**, **Ռոմանոսներ**, **Ջոկեր**, **Տափխաձին**, **Կալեր** և **Քարունջներ** լեռներով:
8	Կատինոք	Սբ Գևորգ		
9	Կասր			
10	Հորջոք (Հյուրջուք, Որջոք)	Սբ Գևորգ		
11	Մահմդենց (Մանդենց)	Սբ Աստվածածին		
12	Մանդոյենց (Մանդենց)			
13	Նամ	Սբ Հովհաննես		
14	Նորշեն	Սբ Գևորգ		
15	Պախոռ (Պախուր), Ներքին	Սբ Գևորգ		
16	Պոռշենց	Սբ Ամտոն (Խերանտուն)		Գավառակի կենտրոնն էր: Գյուղում պահպանվել էին բերդի ավերակներ:
17	Սուրբ Խաչ (Սբխեչգեղ)	Սբ Առաքյալ		
18	Սուրբ Խաչ, վանք			Խիզանի «երկրի» ամենանշանավոր վանքն էր՝ համանուն գյուղին կից: Հայտնի էր նաև **Ավագ Սբ Խաչ** կամ **Սբ Տիկնանց** (իմա՝ **Սրբոց Հռիփսիմյանց**) անուններով: Հայոց հոգևոր մշակույթի ակնառու կենտրոններից մեկն էր:

19	Սմբոն (Սմբատաշեն)	Սբ Աստվածածին		Հայ եկեղեցու թեմական բաժանմամբ գյուղը նշվում է հարևան Վանի նահանգի **Կարճկան** գավառի **Կեցան** գյուղախմբի մեջ: Սմբոնի հարևանությամբ գտնվում էր **Սմբատաշեն Սբ Աստվածածին** վանքը (**Կեցնավանք**): Ենթադրելի է, որ նույնական է **Սբ Հրեշտակապետաց** վանքին: Սմբոնի մոտակայքում երևում էին 1840-ական թթ. վերջերին օսմանյան բանակի կողմից ավերված **Կեցան** գյուղաքաղաքի և բերդի ավերակները: **Սմբոնի** շրջակայքի բնակավայրերը մինչև 1860-1870-ական թթ. զուտ հայաբնակ էին: Սակայն վերը հիշված տխրահռչակ Սայբաթուլլայի և նրա որդի Ջալալեդդինի վայրագությունների հետևանքով լիովին հայաթափվել էին **Կեցնա Կութ** (**Գյուրտ**, պահպանվել էին եկեղեցու ավերակները), **Հաջիան** (պահպանվել էին եկեղեցու ավերակները), **Մեզրե** կամ **Մզրեն** (պահպանվել էին եկեղեցու ավերակները), **Սորովանք** (ավերակ **Սբ Ամենափրկիչ** եկեղեցիով) գյուղերը, ինչպես նաև՝ **Ծրղոնեղ**, **Հալվան**, **Ստին**, **Վերշեն** ագարակները:
20	Տի	Սբ Աստվածածին, Սբ Խաչ		

19-րդ դ. 60-70-ական թթ. ամայացած կամ հայաթափ եղած բնակավայրեր՝ **Ազգոր** կամ **Անկոր** (ուներ **Սբ Սարգիս** անունով եկեղեցի), **Բոնաշեն**, **Կաքվանց** կամ **Կաքվանիս** (ուներ եկեղեցի **Սբ Սիմեոն** անունով, քրդ. Kewkenis), **Շիրեզ** կամ **Շիրիզ** (2 եկեղեցի՝ **Սբ Աստվածածին** և **Սբ Գևորգ**), **Պախոռ** կամ **Պախուր Վերին** (ուներ եկեղեցի **Սբ Սիմեոն** անունով), **Պեսոյենք** կամ **Պեսոյենց** (15-րդ դ. հիշատակվում է **Բեսաւենից** ձևով, քրդ. Busekân):

4) Սպարկերտ

Գավառակը գրավում էր Կեցանի ձախափնյակի կենտրոնական մասով հոսող, վերջինիս վտակ պատմական **Սպարգետի** (այստեղից էլ, մի փոքր աղավաղումով, վարչամիավորի անվանումը) կամ նոր ժամանակներում՝ **Ջոջգետի** (**Շաբանու ձամ**) ողջ ձորահովիտը: Սահմանակցում էր, հյուսիսից՝ **Շենաձորին**, արևելքից, **Սպարկերտի** փոքր լեռնապարով՝ Վանի նահանգի **Մոկս** գավառին, ուր տանող բարձրլեռնային ճանապարհն անցնում էր **Մատի լեռնանցքով**, հարավից՝ **Մամռտանքին** և **Շիրվանին**, իսկ արևմուտքից, Կեցանի հունով՝ **Խիզան-Գյավրոներին** և **Էրունին**: Ըստ տեղանքի այն բաժանվում էր 3 շրջանի՝ **Վերին** (արևելյան հատվածը), **Ներքին** կամ **Վարի** (կենտրոնական հատվածը) և **Նզար** (արևմտյան հատվածը, քրդ. Nîzarê Azê): 16-րդ դ.-19-րդ դ. 1-ին կեսը **Սպարկերտը** Վանի նահանգի ժառանգական սանջակներից էր (ocaklık), որի կենտրոնամրոցը գտնվել է **Հուսպ** գյուղի մոտ (տես նաև գյուղացանկում): 1840-ական թթ. վերջերին, օսմանյան զորքերի կողմից քրդական կիսանկախ

իշխանությունների ջախջախմանը զուգահեռ, ավերվեց նաև **Սպարկերտի բերդը**, իսկ կենտրոնը տեղափոխվեց հայաբնակ **Ներքին Հյուրուք** գյուղ: 1850–1870-ական թթ. այս գավառակն ընդգրկված էր Դիարբեքիրի նահանգի կազմում, որից էլ 1879 թ. անցավ նորաստեղծ Բիթլիսին:

Սպարկերտը Խիզանի գավառի առավել հայաշատ վարչամիավորն էր: Մինչև ուշ միջնադար այն գրեթե զուտ հայաբնակ էր: Քրդերը հիմնականում կենտրոնացած էին գավառակի արևմտյան հատվածում՝ Նզարում (կենտրոնը տեղի քուրդ աղայի նստավայր **Ազ** ավանն էր՝ իր ամրոցով): Քրդերի հետագա ներթափանցման ծավալների մեծացումն այստեղ ևս ունեցել է նույն բացասական հետևանքները, որոնք առկա են **Խիզանի գավառի** մյուս բոլոր գավառակներում: 1850–1880-ական թթ. սկսած հայ բնակչությունը ստիպված էր հեռանալ հիմնականում **Նզարի շրջանի** որոշ գյուղերից (տե՛ս ստորև): Սակայն ինչպես ցույց են տալիս գավառակի տեղանունները, այդ գործընթացն ավելի վաղ էր սկսվել՝ դեռ 19-րդ դ. 1-ին կեսին: Հետևանքը՝ 1 տասնյակից ավելի հայանուն, բայց քրդաբնակ դարձած գյուղերի առկայությունն էր Սպարկերտի ողջ տարածքում [**Ակնես**, **Անդ** կամ **Հանդ**, **Բունս**, **Գոռանց**, **Գվերս** կամ **Գըրվեզ**, **Կապաձոր** (քրդ. Qepesor), **Կապարս** կամ **Կապանց**, **Կիշ** կամ **Գիշ**, **Հուրորս** կամ **Արորս**, **Ճըրճաղ**, **Մասունց** (քրդ. Masus), **Նորս** (<**Նորք**), **Չորնանց**, **Պառմեզ**, **Պսենց** (քրդ. Pîsyan), **Օձում** կամ **Օձի** (քրդ. Uçum) ևն]: Կատարյալ արհավիրք էին 1895–1896 թթ. համիդյան կոտորածները: Չնայած մի շարք գյուղերում տեղ գտած դիմադրական մարտերին (**Առնջիկ**, **Բաստ**, **Կոտենց Վերին**, **Ճաժվա**ն, **Սևքար**, **Սորի**, **Սուզանց**, ինչպես նաև՝ **Կեղսու Սբ Կիրակոս** վանք)՝ Սպարկերտում զոհ գնացին շուրջ 400 հայեր, իսկ վերապրածները բռնի մահմեդականացվեցին (ժամանակավորապես): Ծանր հետևանքներ ունեցավ այս ժամանակահատվածում զանգվածային բնույթ ստացած տեղափոխությունն անհամեմատ ապահով **Բուլանուխ** և **Մանազերտ**: Այնուամենայնիվ, գավառակի հայերը շարունակեցին պահել իրենց տեսակարար գերակշռությունը մինչև Մեծ եղեռն: 1914 թ. 3500-ը գերազանցող հայությունը կազմում էր Սպարկերտի բնակչության շուրջ 60 %-ը:

Ապրիլյան կռիվների ընթացքում ոգմեցի նշանավոր հայդուկ **Լաթոյի (Միհրան Ռաշոյան)** խմբի շնորհիվ սպարկերտցի հայերի գերակշիռ մեծամասնությունը խուսափեց զանգվածային կոտորածից (բացառությունը Նզարի քրդաշատ շրջանն էր, որի հայությունը ծանր կորուստներ ունեցավ, մասնավորապես՝ Բաստը): Սակայն ռուսական բանակի 1915 թ. հուլիսյան նահանջը հարկադրեց Սպարկերտի հայերին գաղթելու Պարսկաստան՝ ճանապարհին տալով սարսափելի կորուստներ: Որոշ տվյալներով վերապրել էր ընդամենը 800 մարդ: Փոքրաթիվ ընտանիքներ կարողացել էին հաստատվել նաև Երևանի նահանգում: 1918 թ. օսմանյան բանակի լայնամասշտաբ հարձակումը կրկին տեղահանեց **Սալմաստի գավառում** հաստատված սպարկերտցիներին, որոնք՝ իրենց բախտակից հայրենակիցների հետ, հարկադրված էին նույնպես հեռանալու բրիտանական բանակի կողմից ռազմակալված Իրաք:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Առնջիկ (Հառնջիկ)	Սբ Աստվածածին, Սբ Կիրակոս		
2	Արեգին (Հարքին)	եկեղեցի		
3	Բադրանանց (Բադրանց)			Ժամանակին գյուղում եղել է վանք, որի հիմքերը պահպանվել էին 20-րդ դ. սկզբին: Այդ մենաստանի քարերով Բադրանանցում կառուցվել է «**Քաֆրի բերդը**»:
4	Բազենց (Պազենց)	Սբ Թեոդորոս (Սբ Թորոս), Սբ Սարգիս		
5	Բազենից վանք (Սբ Աստվա-ծածին)			Համանուն վանքի «մեզրե»-ագարակը:
6	Բաստ (Պաստ)	Սբ Աստվածածին, Սբ Ատովմյանց, Սբ Ստեփաննոս		**Բաստ**, **Բերդաղ** և **Սորի** գյուղերը մտել են **Նզարի** մեջ: Մինչև 1895-1896 թթ. կոտո-րածները Խիզանի գավառի ամենահայաշատ գյուղերից մեկն էր (100-120 տուն): Գյուղից իվ գոյություն ուներ ավերակ ամրոց:
7	Բերդաղ (Բերդակ)	Սբ Սիմեոն		Գյուղի հայերն աչքի են ընկել 1860-ական թթ. քուրդ հրոսակներին ցույց տված ուժեղ դիմադրությամբ:
8	Գեղիս (Կեղիս)	Սբ Սարգիս, Սբ Քրիստափոր		Գյուղում էր գտնվում **Սբ Կիրակոս** (**Կեղսու**) կամ **Սբ Հովհաննես** վանքը:
9	Դալարս	Սբ Գևորգ		Գյուղում կար **Սբ Թալալոս** անունով ուխտատեղի:
10	Դաշտ (Դաշտակ)	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս (Սբ Գևորգ)		Հարևան **Ճրրճաղ** և **Բունս** (**Պունս**) գյուղերը նախկինում հայաբնակ են եղել:
11	Թաղ (Հայի Թաղ, Թաղուկ)			Գեղիսի մի մասն էր՝ «թաղը»: Ի դեպ, արևելյան կողմում գտնվում էր նույնանուն, բայց քրդաբնակ մեկ այլ գյուղ (օտար հորջորջմամբ՝ Tağıkıislam):
12	Լվար (Լվառ)	Սբ Սարգիս		**Լվարից** արևմուտք՝ մեկը մյուսի հարևանությամբ ընկած էին **Պանդիզ**, **Նորս** և **Հանդ** (**Անդ**՝ մեզրեով) երբեմնի հայաբնակ գյուղերը:
13	Խութ (Խոյիդ)	Սբ Աստվածածին		Գյուղում կար ևս 1 ավերակ եկեղեցի՝ **Սբ Թեոդորոս անունով,** որին կից գտնվում էր իր պաղ ջրով հռչակված «**Եկեղեցու աղ-բյուրը**», որը հայտնի ուխտավայր էր:
14	Կոտենց (Կուտենց), Ներքին	Սբ Սարգիս		
15	Կոտենց (Կուտենց), Վերին	Սբ Ստեփաննոս (Սբ Հակոբ)	1	
16	Կռան	Սբ Առաքելոց (Սբ Առաքյալ)		
17	Հյուրուք (Ուրուք), Ներքին	Սբ Աստվածածին		
18	Հյուրուք (Ուրուք), Վերին	Սբ Սարգիս	1	Եկեղեցում պահվել են հայերեն ձեռագրեր:

19	Հուսպ (Հայի Հուսպ)			Գյուղի **Սբ Սարգիս** եկեղեցին Սպարկերտի «ամիրայի» կողմից ավերվել էր 1840-ական թթ. վերջին: Կոչվել է նաև **Քրիստոնեական Հուսպ** (թրք. Üspühiristiyan)՝ ի տարբերություն համանուն քրդաբնակ գյուղի (թրք.՝ Üspüislam): Գյուղում էին գտնվում գավառի երբեմնի կենտրոն **Սպարկերտի** բերդի ավերակները: **Հուսպում** պահպանվել էին ևս 2 ավելի փոքր բերդակների մնացորդները:
20	Զմեն (Մատաձմեն)	Սբ Աստվածածին		Քրդ. Nîzar-ê Mat:
21	ձաժվան (Ժաժվանք)	Սբ Երրորդություն (նախկինում՝ վանք)	1	Եկեղեցին հայտնի էր նաև **Ամենասուրբ Երրորդության** վանք անունով:
22	Մատ	Սբ Սահակ		
23	Ներբան (Ներպան)	Սբ Հարություն		
24	Շիրնից վանք (Կառավակ)			Համանուն վանքին կից ագարակ-մեզրեն: Վանքը հայտնի էր նաև **Սկավառակավանք** (**Սբ Սկավառակ**) կամ **Շիրնից Սբ Գևորգ**: Վերջինիս կից գտնվում էին **Շիրնից** կամ **Շիրնենց և Չորնանց** (**ձոռնանց**) երբեմնի հայաբնակ գյուղերը:
25	Սևքար	եկեղեցի		
26	Սորի (Սովորի, միջնադարում՝ Սաւրի)	Սբ Քրիստափոր		Եվս 1-ը՝ **Սբ Հրեշտակապետացը**, ավերակ էր:
27	Սորվա վանք (Սբ Աստվածածին)			**Սորվա Սբ Աստվածածին** կամ **Նզարու** վանքին կից ագարակ-մեզրեն:
28	Սուզանց (Սոզանց, Սուզենց)	Սբ Գևորգ		Սուզանցից շուրջ 2,5 կմ հվ-արևելք գտնվում էր **Օձում** կամ **Օձի** երբեմնի հայաբնակ գյուղը (քրդ.-թրք. Uçum): Սուզանցից հս-ա-ռեվելք երբեմնի հայկական **Հուրորս** կամ **Արորս** գյուղն էր, ուր պահպանվել էր **Սբ Աստվածածին** (**Սբ Կիրակոս**) վանքը, որը 1870-1880-ական թթ. դեռ կանգուն էր: Վերոհիշյալ բնակավայրում 1860-ական թթ. ապրել է մինչև 30 տուն հայ:
29	Տանձիս (Տանձես, Տանձիկ)			
30	Տոսու (Տուսու, Թոսու)	Սբ Գևորգ (Սբ Սարգիս), Սբ Սահակ Պարթև		**Տոսուից** շուրջ 4 կմ արմ գտնվում էր **Կապարս** (**Կապանց**) երբեմնի հայաբնակ գյուղը, ուր պահպանվել էին մենաստանի ավերակներ: Նախկինում հայաբնակ է եղել նաև **Կապարսի** հարավային կողմում գտնվող **Կիշ** (**Գիշ**) գյուղը:
31	Տվաղուս	Սբ Գևորգ		**Տվաղուս** և **Կռան** գյուղերի միջև բարձրացող մի ապառաժի վրա գտնվում էին **Բոզբեկի բերդի** ավերակները:
32	Օղանդ (Հողանդ)	Սբ Գևորգ		

19-րդ դ. 60-70-ական թթ. ամայացած կամ հայաթափ եղած բնակավայրեր՝ **Եղվեճին** կամ **Եղուճին** (քրդ. Avîlĉin), **Խլենց** (ուներ եկեղեցի), **Մեզրե** կամ **Մզրեն** (**Հանդի մեզրե**), **Շիրնից**, **Ստամբող** կամ **Ստամբողանց**:

5) Մամռտանք

Ինչպես արդեն նշել ենք, **Մամռտանքը** գրավում էր Խիզանի գավառի ծայր հարավ-արևելյան հատվածը՝ զբաղեցնելով **Արևելյան Տիգրիսի** (այդ մասում՝ **Մոկս**) աջակողմյան համանուն վտակի ձորահովիտը, որը հնում հայտնի էր **Միջա** անունով: Սահմանակցում էր հյուսիսից և արևմուտքից՝ **Սպարկերտին**, արևելքից, **Վանքեր** լեռնագագաթով՝ **Մոկսին** (Վանի նահանգ), հարավից, Արևելյան Տիգրիսի հունով՝ **Բարվարիին**, հարավ-արևմուտքից՝ **Շիրվանին**: Օսմանյան վարչական բաժանմամբ, 1-ին աշխարհամարտի նախօրեին Մամռտանքը Սպարկերտի հետ կազմում էր մեկ միասնական գյուղախումբ (թրք. nahiye): Մամռտանքը համապատասխանում է պատմական **Մոկաց** աշխարհի **Միջա գավառին,** որի կենտրոնը՝ համանուն ավանը, ժողովրդական ավանդության համաձայն, ունեցել է մինչև 500 տուն հայ բնակիչ: Ի դեպ, զարգացած միջնադարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում այս գավառակը հիշվում է նաև «**Մայեկաց** (**Մարեկաց**) **երկիր**» անունով, ինչը, կարծում ենք, «**Մոկաց աշխարհի (երկրի)**» բարբառային տարբերակն է: 15-րդ դ. սկսած Մամռտանքի տարածք թափանցած քրդական նամիրի ցեղն այստեղ ձևավորեց **Նամիրան** կամ **Բերդաղ** ժառանգական իշխանությունը (ocklık), որը 16-րդ դարից -19-րդ դ. 1-ին կեսը մտել է Վանի նահանգ-էյալեթի կազմի մեջ: 1840-ական թթ.՝ Օսմանյան կայսրության կողմից քրդական և հայկական կիսանկախ իշխանությունների վերացմանը զուգընթաց, Հյուսիսային Միջագետքի **Մարդինի շրջանից** Մամռտանքի տարածք սկսեցին թափանցել վաչկատուն («քյոչար», թրք. köçeri) նորանոր ցեղեր, որոնցից **ալըկանը** և **ադիանն** աստիճանաբար իրենց գերիշխանությունը հաստատեցին հայաբնակ գյուղերի վրա: Վաչկատունների բռնություններով պայմանավորված՝ Մամռտանքից սկիզբ առավ հայ բնակչության արտագաղթ: Այդ գործընթացն ավելի զանգվածային դարձավ 1870-ական թվականներից, երբ հարյուրավոր հայ ընտանիքներ հարկադրված էին հեռանալ հիմնականում **Բուլանուխ** և **Մանազկերտ**, ինչպես նաև **Վանի** մոտակա գավառներ: Պետք է նշել, որ հայերը քրդական տիրապետությունից զգալիորեն տուժել էին դեռ 17-18-րդ դդ., երբ մի շարք բնակավայրերում տեղ գտած բռնի իսլամացման հետևանքով շատ ընտանիքներ հետզհետե «քրդացել» էին [**Ամփաս** կամ **Քոշկ**, **Արարք**, **Արմայիս**, **Դիմանց** կամ **Դիմաց** (քրդ. Tivas), **Հետենց** (քրդ. Hindiz), **Հզմիկ** կամ **Իզմիկ**, **Հոպուն**, **Մայդան**, **Շատենց** (քրդ. Şandiz), **Սմողս** ևն]:

Մամռտանքի հայերը ծանր կորուստներ կրեցին 1895-1896 թթ. համիդյան կոտորածների ընթացքում: Հայ բնակչությունը զգալիորեն տուժեց նաև 1912-1913 թթ. քուրդ ավազակապետ, տխրահռչակ Ջալալեդդինի որդի Սեյիդ Ալիի և ադիանցի Թահըր (Դահըր) աղայի վայրագություններից, որոնց հետևանքով 1908 թ. բնօրրան վերադարձած շատ ընտանիքներ կրկին հեռացան: Ի հետևանս այս ամենի՝ գավառակի հայ բնակչության թիվը 1914 թ. մի փոքր էր միայն գերազանցում 1800-ը (260 տուն), այն դեպքում, երբ 1870-ական թթ. կեսերին այն կազմում էր շուրջ 4500 մարդ (640 տուն): Ի դեպ, «քյոչար» քրդերի վայրագություններից անմասն չեն մնացել նաև տեղի նստակյաց քրդերը, որոնք ստիպված էին լքելու **Նորշեն**

և **Մեմլուկ** գյուղերը: Այնուամենայնիվ, Մեծ եղեռնի նախօրյակին Սամռտանքում հայերը շարունակում էին կազմել բնակչության մեծամասնությունը՝ շուրջ 60 %-ը:

Թեև 1915 թ., մեր կողմից արդեն բազմիցս հիշատակված **Լաթոյի** մարտական խմբի շնորհիվ, մամռտանցի հայերը խուսափեցին զանգվածային կոտորածից, սակայն ն. թ. հուլիսին նույնպես հարկադրված էին գաղթել **Սալմաստի գավառ** (Պարսկաստան): 1918 թ. վերապրած ընտանիքները ստիպված էին կրկին բռնելու գաղթի ճանապարհը՝ այժմ արդեն դեպի Իրաք: 1921 թ. մամռտանցի և խիզանցի որոշ ընտանիքներ հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան: Նրանց սերունդներն այժմ բնակվում են **ՀՀ**-ի **Արագածոտնի** և **Գեղարքունիքի** մարզերում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ապարանք (Ապարանց, Հաբրանց)	Սբ Աստվածածին		17-րդ դ. **Ապարանքը** հիշվում է որպես «գիւղաքաղաք»: Գյուղի հյուսիսային մասում կառուցված էր **Մոկաց աշխարհի** հռչակավոր **Սբ Խաչ** (**Սբ Նշան**) վանքը, որին ներբողյան է նվիրել **Սուրբ Գրիգոր Նարեկացին**: Վանական համալիրը բաղկացած էր **Սբ Աստվածածին**, **Սբ Կարապետ** և **Սբ Ստեփաննոս Նախավկա** եկեղեցիներից: Ընդ որում, 10-րդ դ. վերջին **Սբ Աստվածածին** եկեղեցում ի պահ էր դրվել Բյուզանդիայից բերված Սուրբ Խաչի մասունքը: Վանքը հայ հոգևոր կյանքի և գրչության նշանավոր կենտրոն էր, սիրված ուխտավայր: **Ապարանքի** մոտ գտնվող **Արարք** կամ **Հարաք** գյուղում (20-րդ դ.սկ. անբնակ) գտնվել են **Սբ Խաչ** վանքի ջրաղացները, որոնց կից գոյություն ուներ մատուռ-ուխտատեղի: **Ապարանքից** շուրջ 6 կմ արմ՝ **Մամռտանից ձորի** աջ ափին գտնվող **Դիմանց** (**Դիմաց**, ժողովրդական ստուգաբանությամբ՝ «վանքի հանդիման») պահպանվել էր մզկիթի վերածված **Սբ Գևորգ** եկեղեցին: Ի դեպ, մենաստանի ավերակներ էին պահպանվել նաև գավառակի ամենահարավային՝ **Հոպուն** (քրդ. Obin) գյուղի մոտակա բլրի գագաթին:
2	Ավնդանց (Հավնդանց, Հավթանց)	Սբ Պողոս-Պետրոս		**Ավնդանցը** հայ գրչության հայտնի կենտրոն էր, ուր ընդօրինակվել են բազմաթիվ մատյաններ: 16-17-րդ դդ. ձեռագիր հիշատակարաններում գյուղի եկեղեցին որպես կանոն նշվում է **Երեքխորան** ձևով («...ընդ հովանեաւ Սբ **Երեք Խորանացս՝ Սրբոցն Պետրոսին** և **Պողոսին** և **Սբ Գէորգեայ Զօրավարին**» կամ «... ընդ հովանեաւ **Սբ Գէորգեայ** և գլխաւոր **Առաքելոցն Պետրոսի** և **Պողոսի**»): Ընդ որում, 1358 թ. մի հիշատակարանում Ավնդանցում հիշատակվում է նաև **Սբ Աստվածածինը** եկեղեցին: **Ավնդանցից** շուրջ 5 կմ հվ-արևելք գտնվող **Հզմիկ** (**Իզմիկ**) «քուրդ» գյուղում պահպանվել էին հայերեն արձանագրությունների մնացորդներ:
3	Գուզենց	Սբ Աստվածածին		
4	Կառնա	Սբ Կիրակոս		
5	Կթանց	Սբ Սարգիս		
6	Կոնիս (Կոնես)	Սբ Հակոբ		

7	Հարաթ	Սբ Պողոս-Պետրոս		
8	Հարամուս	Սբ Աստվածածին		Հարավում՝ Հարամուսին կից գտնվող **Մայդան** երբեմնի հայաբնակ գյուղում, ավանդության համաձայն Սբ Խաչի ուխտավորները ձիարշավներ կազմակերպելու սովորություն են ունեցել: Նույն գյուղի կենտրոնում գտնվել է վանքի սպասավոր **Սիմոնի** շիրիմը, որն ուխտատեղի էր ինչպես հայերի, այնպես էլ քրդերի համար: Նշենք, որ այս անձը, իսլամ ընդունելով և «քրդանալով», վերանվանվել էր **Սինան**:
9	Միջա (Մեշա)	Սբ Մինաս, Սբ Սահակ		
10	Մութ (Մոտ)	Սբ Գևորգ		
11	Շենաղբյուր	Սբ Սահակ (Պարթև), Սբ Քրիստափոր (Զորավար)		1640 թ. մի հիշատակարանում հիշվում են «**Սբ Սահակ Պարթև Հայրապետ** և **Արագահաս Սբ Մինաս Զօրավար**» եկեղեցիները: Շենաղբյուրից արմ՝ 2-4 կմ հեռավորության վրա գտնվում էին **Հետենց**, **Շատենց** և **Սմողս** երբեմնի հայաբնակ գյուղերը: Դրանցից 1-ինում պահպանվել էին եկեղեցու (վանքի) ավերակներ, խաչքարեր, որոնք քրդերը թաղել էին հողի տակ: Հատկանշական է, որ **Հետենցի** աղբյուրին կից հողատարածքը քրդերեն կոչվել է Serkaniê Dêrê- «վանքի աղբյուրի գլուխ»: **Շատենցում** երևում էին **Սբ Սարգիս** եկեղեցու մնացորդները, ինչպես նաև՝ կամարակապ 2 աղբյուր: **Սմողսի** «քուրդ» ընտանիքներից մեկը կոչվել է Mala hêrês-«երեցի տուն»՝ ապացույց գյուղում հայերի գոյության մասին:
12	Պարկանց (Բարկանց)	Սբ Գևորգ		
13	Սեղ (Ծեղ)	Սբ Աստվածածին		16-րդ դ. հիշվում որպես «գիւղաքաղաք»: Ըստ ավանդության եղել է Արծրունիների նստավայրերից: Գյուղի մոտ էր գտնվում **Դերշկի** կամ **Դերժկու Սբ Աստվածածին** վանքը:
14	Օվ (Հով)	Սբ Թովմաս		15-րդ դ. հիշատակվում է **Սբ Աստվածածին** եկեղեցին:

19-րդ դ. կեսերից մինչև 20-րդ դ. սկիզբն ամայացած և հայաթափ եղած գյուղեր՝ **Ակնես**, **Բվան** (ուներ **Սբ Գևորգ** անունով եկեղեցի), **Գոմեր**, **Հախավուս** կամ **Հախանց** (ուներ **Սբ Հովհաննես** անունով եկեղեցի), **Նարանց**, **Սենամերիկ** կամ **Սերամերիկ, Վանք** (**Դեր**):

6) Ներքին Կարկառ (Եղեգյաց ձոր)

Ներքին Կարկառն ընկած էր Խիզանի գավառի ծայր հյուսի-արևելքում: Այն գրավում էր **Կեցանի Եղեգիս** վտակի և վերջինիս **Խնձորուտի ձոր** և **Թացու** օժանդակների ձորահովիտները, որոնք հոսում են **Ռշտունյաց** կամ **Շատախի** լեռների հարավային ստորոտներով: Սահմանակցում էր հյուսիսից, արևելքից և հարավ-արևելքից՝ Վանի նահանգի **Կարճկան**, **Վերին Կարկառ** և **Մոկս** գավառներին, հարավ-արևմուտքից՝ **Սպարկերտին** և **Շենաձորին,** իսկ արևմուտքից՝ **Կեցանի** հարավային հատվածը կազմող **Սմբոնի շրջանին** (20-րդ դ. սկ. ընդգրկված էր Խիզանի գավառի կազմում): Ներքին Կարկառի կենտրոնը **Եղեգիս** ավանն էր համանուն

գետի աջ ափին: 16–րդ դ.–19–րդ դ. 1–ին կեսին օսմանյան պաշտոնական փաստաթղթերում կոչվում էր **Աղաքիս** կամ **Ախքիս** (թրք. Ağakıs կամ Ahkis) և Վանի նահանգ–էյալեթի ժառանգական գավառներից (ocaklık) մեկն էր: Ավելի ուշ՝ 19–րդ դ. 70–ական թթ., Ներքին Կարկառն անցել է նորաստեղծ Բիթլիսի նահանգին (վիլայեթ): Ընդհուպ մինչև Մեծ եղեռն գավառակը վերջինիս առավել հայաշատ վարչամիավորներից էր: 1914 թ. հայերը կազմում էին բնակչության ավելի քան 80 %–ը (շուրջ 2500 մարդ): Մշտական քուրդ բնակչություն այստեղ հաստատվել է 18–19–րդ դդ.՝ հիմնականում Եղեգյաց ձորի արևմտյան՝ **Կեցանին** սահմանակից հատվածի երբեմնի հայաբնակ որոշ բնակավայրերում (տե՛ս ստորև):

Հակահայկական խժդժությունները Ներքին Կարկառում սկսվեցին 1915 թ. հունվար–փետրվար ամիսներին: Չհանդուրժելով թուրք ոստիկանների բռնությունները՝ տեղի հայերը հակահարված տվեցին, իսկ հետո՝ հայտնի հայդուկ, ծկորցի **Գալուստ Պողոսյանի** (**Վռըշիկ Գալո**) գլխավորությամբ կազմակերպեցին զինված դիմադրություն գավառակ ներխուժած ոստիկանական և բանակային զորաջոկատներին, որոնց գլուխ կանգնած էր տխրահռչակ Սեյիդ Ալիի որդի արյունարբու Հաջի Դարվեշը՝ քրդական հրոսակներով: Շուրջ 1 շաբաթ **Սենեգբրի** (**Սինագբր**) բարձունքներում, **Որիզ** և **Արկենց (Վերին Կարկառ)** գյուղերի մոտ տեղի ինքնապաշտպանական ուժերը, որոնց օգնության էին եկել նաև նշանավոր **Լաթոն** և գավաշցի **Միհրան Չաթոյանը՝** իրենց թռուցիկ խմբերով, հետ էին մղում ջարդարարների կատաղի գրոհները: Սակայն ի վերջո՝ հատկապես **Գալոյի** զոհվելուց հետո, թշնամու գերակշիռ ուժերի ճնշման ներքո համեմատաբար փոքր կորուստներով (շուրջ 130 զոհ) դիմադրության ղեկավարները ողջ Կարկառի հայ բնակչությանը տեղափոխեցին մասամբ **Սպարկերտ** և **Շենաձոր**, մասամբ՝ **Մոկս**: 1915 թ. հուլիսյան գաղթը ծանր կորուստներ պատճառեց նաև կարկառցիներին: Վերապրածները հիմնականում հաստատվեցին **Արևելյան Հայաստանում,** ինչպես նաև **Սալմաստի գավառում**: Սակայն վերջինիս տարածքում հաստատված ընտանիքները հարկադրված էին կրկին տեղահանվել 1918 թ. մայիսին, այս անգամ դեպի Իրաք:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Առղու (Հառղու)	Սբ Ստեփաննոս		Առղուից շուրջ 1,5 կմ հս–արևմուտք՝ **Եղեգիսի** աջ ափին գտնվող **Բերդակ** գյուղը հայաթափվել էր 1890–ական թթ.: Գյուղում պահպանվել էին **Սբ Անտոն** եկեղեցու ավերակները:
2	Արբենց (Հարբոնց)	Սբ Գևորգ (Ջորավար), Սբ Լուսավորիչ		Գյուղից 1,5 կմ հս–արևմուտք գտնվում էր **Կարմիրարտ** (**Կարմիրարտեր**) հայանուն գյուղը:
3	Բերկրի	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ		
4	Եղեգիս (Էղեգիս, Ախքիս)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ		Եղեգիսի եկեղեցում միջնադարում պահվել է **Զաքարոնց Ավետարան** սրբացված ձեռագիրը (հիշվում է 1599 թ.): Ուներ բերդ:
5	Թացու	Սբ Ատովմյանց (Սբ Ատոմ Ջորավար), Սբ Գևորգ(Ջորավար)		**Թացուից** հս՝ մինչև **Եղեգիս** վտակը, ընկած էին հայանուն, բայց 19–րդ դ. 2–րդ կեսին արդեն քրդաբնակ դարձած **Լեռնիս** (**Նեռնիս**),**Կոնդոս** (**Գունդուզ**), **Հովս** (**Օֆրս**), **Ոստին** (**Հոստուն**) և **Ճակոռնց** գյուղերը:

6	Խնձորուտ	Սբ Կիրակոս		Գյուղի մոտ գտնվում էր **Խնձորուտի Սբ Գևորգ** վանքը:
7	Ծկոր (Ձկոր)	Սբ Թադևոս		Գյուղի մոտ գտնվում էր **Երաշխավոր Սբ Աստվածածին** վանքը:
8	Հալրս (Ալս)	Սբ Թադևոս		
9	Հուկուրձու (Հերքյուրկին)	Սբ Ստեփաննոս Նախավկա		Գյուղից հս բարձրացող **Սենեգքը** (**Սինագքը**) լեռան գագաթին գտնվում էր **Սբ Սինամ Կույսի** մատուռ-ուխտատեղին:
10	Որիզ	Սբ Հովհաննես, Սբ Ստեփաննոս		

7) Սղերդ քաղաք

Բիթլիսի նահանգի համանուն սանջակի կենտրոն **Սղերդ քաղաքը** (թրք. Siirt կամ İsyert) գտնվում էր (և է) Արևելյան Տիգրիս-Բոհտանից 3-4 կմ հյուսիս՝ արգավանդ սարահարթում: Մինչև 19-րդ դ. 70-ական թթ. **Սղերդը** Դիարբեքիրի նահանգի կազմում էր: Նորաստեղծ Բէթլիսին է անցել 1879 թ.: Առաջին աշխարհամարտի նախօրյակին քաղաքի բնակչության թիվը կազմում էր 4000 տուն (որոշ տվյալներով՝ անգամ 5000 տուն), որի հիմնական մասը քրդեր էին՝ շուրջ 3000 տուն: Հայերի թիվը 500 տուն էր կամ ավելի քան 4000 բնակիչ (1890-ական թթ. 550-600 տուն): Սղերդում ապրում էին նաև ասորիներ (ավելի քան 200 տուն, գերազանցապես քիլդանիներ, նաև հակոբիկյաններ կամ յաղուբիներ, «սրիանի» կաթոլիկներ), ինչպես նաև թուրքեր: Թե՛ մահմեդական և թե՛ քրիստոնյա բնակիչների խոսակցական լեզուն, գրեթե առանց բացառության, բարբառային արաբերենն էր: Ընդ որում, թեև Սղերդի բնակչության մեծամասնությունը 20-րդ դ. սկզբին կազմել են մահմեդականները, սակայն ժամանակին այստեղ գերիշխող են եղել հայերը և մյուս քրիստոնյաները: Դրա լավ ապացույցներից մեկն այն է, որ քաղաքի գլխավոր և, ըստ էության, միակ ջրամատակարարման աղբյուրը կոչվել է **Այն Սալիբ** (արաբերեն՝ «խաչաղբյուր»): 1914 թ. Սղերդի հայերը (ինչպես առաքելական, այնպես էլ կաթոլիկ) ունեին 3 եկեղեցի՝ **Սուրբ Թադևոս-Բարդուղիմեոս**, **Սուրբ Սարգիս** և **Սուրբ Աստվածածին**: 19-րդ դ. 90-ական թթ. գործում էին Կ. Պոլսի «**Միացյալ ընկերության**» կողմից բացված 2 ազգային վարժարաններ, ուր Մեծ եղեռնի նախօրյակին սովորում էր 330 երկսեռ աշակերտ: Ի դեպ, այս հանգամանքը նպաստել էր քաղաքում հայերենի զգալի տարածմանը: **Սղերդը** միաժամանակ նույնանուն գավառակի (թրք. kaza) կենտրոնն էր: Այն ընդգրկել է ոչ միայն քաղաքի անմիջական շրջակայքը և **Ազնվաց ձոր** (այս հատվածում **Գազր** կամ **Խազլ**) և **Բաղիշո ջրի** (**Բաշորաջուր**) միջագետքը, այլև Արևելյան Տիգրիսի աջափնյակով ձգվող բնակավայրերը՝ մինչև վերջինիս հետ Արևմտյան ձյուղի միախառնումը: Սղերդի գյուղերում հայերի հետ կողք-կողքի բնակվել են նաև ասորիներ (մասամբ՝ հայախոս): Այլևայլ սկզբնաղբյուրների տվյալների համադրումով ճշտված են հայաբնակ (մասամբ՝ ասորաբնակ) հետևյալ գյուղերն ու ավանները. **Այնմուլք**, **Ավդե** (**Ներքին** և **Վերին**), **Բալոկ**, **Բեքյանդ** կամ **Բեքենդ** (եկեղեցին՝ **Սբ Քառասուն Մանուկ**, կիսավեր), **Բրհուրիկ**, **Գազր** (**Կեզեր**), **Դեգալա**, **Դեհուկ** կամ **Դուհուկ**, **Դեր կամ Դեյր** (հայտնի էր **Սուրբ Հակոբ**, ասորերեն՝ **Մար Յաղուբ** հինավուրց վանքով, որը խոշոր սրբավայր էր

հավասարապես 2 ժողովուրդների համար), **Դերղալիբ**, **Թազաքյանդ** (քրդ. Göndenu–«նոր գյուղ»), **Թիլ** կամ **Թլա Նավոռ** (եկ. **Սբ Աստվածածին**, այս գյուղի մոտ են միախառնվում Տիգրիսի 2 ճյուղերը՝ կազմելով միասնական գետը), **Խոշենան**, **Կոճրկ** կամ **Քոշկ** (ուներ եկեղեցի), **Հուսենիկ** կամ **Հասընի** (եկ. **Սբ Գևորգ**, կիսավեր), **Ջաֆան** (**Ջրֆան**) կամ **Ջավ** (եկ. Սբ Եղիա), **Ջվանրկա(ն)**, **Տրվլուկ** կամ **Թավլիկ**:

1895–1896 թթ. **Սղերդ** քաղաքի և շրջակա հայաբնակ գյուղերի հայերը ծանր կորուստներ ունեցան: 1915թ. մայիսին՝ Վանից խուճապահար փախչող արյունարբու Ջևդեթի բանակի մնացորդները և նրան հետևող թրքաքուրդ խաժամուժն իր ողջ մաղձը թափեց Սղերդի հայության վրա: Այդ ահավոր բնաջնջումից փրկվեցին միայն փոքրաթիվ անհատներ...

8) Բարվարի (Բարվար)

Ընդգրկում էր Արևելյան Տիգրիսի կամ Բոհտանի միջին հոսանքի (այդ հատվածում նաև **Բշրագետ** կամ **Շատախ**) դարատափերը, որտեղից էլ առաջացել է գավառի անվանումը (քրդ.՝ berweri–«դարատափ», «դարավանդ», «տեռաս»): Սահմանակից էր հյուսիսից **Մոկաց ջրի** ստորին ավազանի շրջանում՝ **Մոկսին** (Վանի նահանգ), արևելքից՝ Արևելյան Տիգրիսի ձախակողմյան **Ձկնագետ** (**Մասեռ**) կամ **Սինեբեր** վտակի հունով՝ **Շատախին** և **Հաքքարիին** (դարձյալ՝ Վանի նահանգ), արևմուտքից՝ **Շիրվանին**: Հարավում, **Կորդվաց կամ Ջուդի** լեռների կենտրոնական հատվածը կազմող **Հարակոլի** (**Հարանկոլ**) բարձրավանդակը՝ համանուն լեռնագագաթով (2943 մ), Բարվարին բաժանում էր **Արվախից** (**Էրուի**): Տարածքի ձգվածության և տեղանքի պատճառով Բարվարին կազմված էր մի քանի հատվածներից՝ **Ոզմի** ենթաշրջան (հյուսիսում՝ **Մոկաց ջրի** ստորին հոսանքի շրջանում), **Բորմա Նըզար** (արևելքում՝ Ձկնագետի Տիգրիսի հետ միախառնման շրջանում), **Կարագետ** («**Կարաճամեր»)** կամ **Տայան** (հարավ–արևելքում՝ **Ձկնագետի** ձախափնյակը), **Խասխեր–Սարհալի ջրի** ենթաշրջան (արևմուտքում), **Հարակոլի** ենթաշրջան (հարավ–արևմուտքում, **Կորդվաց** լեռներ): Բարվարիի կենտրոնը **Խասխեր (Խրսխեր)** ավանն էր Արևելյան Տիգրիսի ձախ ափին: 1914 թ. **Խասխերը** որոշ տվյալներով ուներ 300 տուն բնակիչ, որից միայն 25–ը՝ հայ: Հարկ է նշել, սակայն, որ **Խասխերը** 19–րդ դ. կեսերին ուներ 150 տուն հայ բնակիչ, որոնց մեծագույն մասը, չդիմանալով գավառ ներթափանցած քոչվոր ադիանցի աղաների վայրագություններին, հեռացել էր այլևայլ վայրեր: Մինչև ուշ միջնադար Բարվարիի բնակչության գերակշիռ մեծամասնությունը կազմել են հայերը: Սակայն 19–րդ դ. 1–ին տասնամյակներին Մոսուլի շրջանից «քյոչար» (վաչկատուն) քրդերի ահագնացող ամենամյա տեղափոխությունները դեպի **Կորդվաց լեռների** արոտավայրեր աղետալի հետևանքներ ունեցան գավառի հայ բնակչության համար: Արդեն 19–րդ դ. 50–60–ական թթ. հիմնովին ավերվել ու ամայացել էին **Կարագետի** հովտից մինչև **Ձկնագետ** սփռված բազմաթիվ հայկական բնակավայրեր [**Աղեր** կամ **Աղկեր**, **Ավրախ** կամ **Ավերակ**, **Բերդերան** (**Հեշատ**), **Գեղաշեն**, **Խնձորիկ** կամ **Խնձորգին**, **Կասրոկ**, **Կոկենց** կամ **Կոկյանիս**, **Հուսին** կամ

Օսյան, **Մարմետ**, **Պնդոնի**, **Քրմյանց** (քրդ. Kîmyanis), **Օրմինաս**]: 1870-ական թթ. դրանցից շատերում դեռ պահպանվել էին հայկական եկեղեցիների և վանքերի բազմաթիվ ավերակներ: Շատ դեպքերում հայերի արտաքսումը տեղի էր ունենում վայրագ կոտորածների ուղեկցությամբ, ինչպես **Կարագետի** ակունքների շրջանում գտնվող **Կար** բազմամարդ ավանը (ժողովրդի շրջանում հայտնի էր որպես «քաղաք», կից գոյություն ուներ ամրոց՝ «**Իսահակի բերդ**» անունով): Ընդ որում, չի բացառվում, որ այս երևույթը կապված էր **Կարի տափարակի** («**Կարաճամեր**») նավթահորերի և հանքային աղբյուրների առկայության հետ, որոնք, բնիկներից բռնի կերպով խլվելով, ամբողջովին հայտնվեցին նորեկ քուրդ աղաների տնօրինության ներքո: Նման իրավիճակում **Կարի** և շրջակա գյուղերի հայ բնակչության մի զգալի հատված ստիպված էր մահմեդականություն ընդունել և հետզհետե «քրդանալ» (այդ հայերը, որոնք հաշվվում էին 400–500 տուն, հայտնի էին Êla Ĉem-ê Karê, իմա՝ «**Կարագետի ժողովուրդ**» հավաքական անունով): Ուշագրավ է, սակայն, որ հարևան որոշ գյուղերում հայերը մինչև Մեծ եղեռն պահել էին իրենց ինքնությունը՝ յուրացնելով վաչկատուն կենցաղը և դառնալով որևէ քրդական ցեղի մաս: Մասնավորապես **Կարագետից** մի փոքր հարավ ընկած **Հոլ** և **Գավան** (**Քավաշ**) գյուղերի հայ բնակչությունը (20-րդ դ. սկ. 120 տուն) համարվել է **տայան** (տայանցի) քրդերի մի հատվածը: Որպես կանոն տեղի բնակիչներն ամռան ամիսներին իրենց հոտերով բարձրանում էին **Շատախի** լեռնային արոտավայրերը, իսկ ձմռան ամիսներին՝ հանգրվանում իրենց բնակավայր-ձմերոցներում: 1915 թ. նշված ցեղի գլխավորների շնորհիվ կոտորածից փրկված «քյոչար» հայերն անցան Շատախ, իսկ այնուհետև տեղափոխվեցին Արևելյան Հայաստան և բնակություն հաստատեցին Կոտայքի **Թութիա** գյուղում (այժմ ապաբնակեցված): Նման էթնոսոցիալական վերափոխություններ տեղ գտան նաև **Հարակոլի** ենթաշրջանում: Քոչվորների ճնշման ներքո այստեղ գրեթե ամբողջությամբ «քրդացավ» **Աներ** կամ **Ազեր** (պահպանված փոքրաթիվ հայ ընտանիքները 1915 թ. նույնպես տեղափոխվել են Կոտայք), **Խարխուր**, **Կոպրջանիս** (<**Կոպարջանց**),**Սայանիս** (<**Սահանց՞**), **Մարանիս** կամ **Մերանիս** (<**Մարանց**), **Մարջանիս** (<**Մարջանց)**, **Տալ**, **Տիրի** և մի շարք այլ գյուղերի բնակչությունը:

1-ին աշխարհամարտի նախօրյակին Բարվարիի 4000-ից ավելի հայ բնակչությունը կենտրոնացած էր գերազանցապես **Ոզմի** և **Բորմա Նըզարի** ենթաշրջաններում: Գավառի էթնիկական նկարագրի առանձնահատկություններից մեկը հայախոս «ասորիների» (նեստորականներ) առկայությունն էր: Այս երևույթը բացատրվում է դեռ 5-6-րդ դդ. Սասանյան արքունիքի Հայ Առաքելական եկեղեցու դեմ վարած կրոնական քաղաքականությամբ, որի հետևանքով Հարավային Հայաստանի մի շարք տարածքներում (**Աղձնիք**, **Մոկք**, **Կորճայք**, **Աղբակ** ևն) հայ բնակչությունը հարել էր նեստորական դավանանքին: Այդպիսի գյուղեր հանդիպում էին նաև հարևան **Շիրվանում** (**Շերվանք**) և **Արվախում** (**Էրուհ**): Գերազանցապես հայախոս միջավայրում տեղի էթնիկ հայերը, այնուամենայնիվ, պահել էին իրենց մայրենին ընդհուպ մինչև Մեծ եղեռն և հայկական սզբնաղբյուրներում, որպես կանոն, հայ են դիտարկվում:

Բարվարիի գավառում բացառիկ տեղ ուներ զուտ հայաբնակ **Ոզմ** ավանը, որը գտնվում էր Արևելյան Տիգրիսի աջակողմյան **Մոկաց ջուր** վտակի (պատմական՝ **Որբ**) ձախափնյակում: Նախկինում այն եղել է **Մոկսի հայկական կիսանկախ մելիքության** բնակավայրերից: Սակայն հանգամանքների բերումով, 19-րդ դ. սկզբին Ոզմն իր շրջակայքով մտավ Բարվարիի կազմի մեջ: Տեղի բնակիչները ողջ Հարավային Հայաստանում հռչակված էին որպես հմուտ գզրարներ (բրբռ.՝ «լպուտ» կամ «կատան»), անգամ ունեին յուրահատուկ գաղտնալեզու (jargon): Ոզմեցի գզրարները հաճախ հասնում էին նաև Արևելյան Հայաստան, Միջագետք և այլ հեռավոր վայրեր: Սակայն ոզմեցիները միաժամանակ հայտնի էին որպես քաջ մարտիկներ, որոնք բազմիցս արժանի հակահարված են տվել շրջակա վայրենաբարո քրդերին, հատկապես Մոկսի հարավի ձորահովիտներում բնակվող տինիսցիներին: Իր անվախության շնորհիվ ոչ միայն Բարվարիում, այլև շրջակա գավառներում մեծ հարգանք էր վայելում ոզմեցի հայդուկապետ **Լաթոն** (**Միհրան Ռաշոյան**)՝ ավանի զինված ջոկատների ընդհանուր հրամանատարը: Ընդ որում, 1915 թ. Ոզմի կռվողների թիվը հասնում էր 200-ի: Ըստ էության, Ոզմը Մոկսի հայկական կիսանկախ մելիքության վերջին բեկորն էր, որի արիասիրտ հայերը համատարած զինված էին և պահել էին նկատելի ինքնավարություն: Ի դեպ, զենք են կրել նաև ոզմեցի կանայք:

1915 թ. Բարվարիի գավառի հայ բնակչությունը նույնպես ենթարկվեց զանգվածային կոտորածի: Թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ ավերվեց նաև Ոզմը, որի բնակչությունը ստիպված էր մարտերով նահանջել ավելի անվտանգ **Մոկս**: Ընդ որում, **Լաթոն** իր թռուցիկ զինված խմբերով կարևոր դեր խաղաց հարևան որոշ գավառների հայ բնակչության պաշտպանության գործում: Նույն թվականի ամռանը վերապրածները նույնպես ստիպված էին հեռանալ բնօրրանից: Հիմնական մասը՝ մասնավորապես ոզմեցիները և **Բորմա Նըզարի** առանձին գյուղերի բնակիչներ, հաստատվել են Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում, ուր և ապրում են նրանց սերունդները:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ալկև (Ըլկեֆ, Հըլկեֆ)	Սբ Ստեփաննոս		
2	Ատև (Ատեֆ, Ատաֆ)			
3	Արդվինա (-ն, Առտվան), Ներքին	Սբ Հակոբ		
4	Արդվինա (-ն, Առտվան), Վերին	Սբ Մինաս		
5	Բանիջան			
6	Բորմ (Նզար)	Սբ Սահակ		Եկեղեցին կիսավեր էր:
7	Դաշտոք (Դաշտըկ)	եկեղեցի (ավերակ)		Մոտակայքում պահպանվել էին **Սարեկենդեր** բերդի ավերակները:
8	Դըմթազ (Դընթանց)			
9	Խախ (Հախ)			Հայաթափվել է 19-րդ դ. 80-ական թթ.:
10	Խասխեր (Խըսխեր)	Սբ Աստվածածին		Պահպանվել էին **Խասխերի** կամ **Բարվարա** («**Բըրվարա**») բերդի և պարիսպների ավերակները:

11	Կեփ			
12	Հավելանց (Ավելանց, Վիլաս)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ		
13	Հարաթ (Հալատ)	Սբ Սարգիս		
14	Հեշատ (Հեշադ), Վերին	Սբ Գևորգ		
15	Մալոք (Մալըկ)	Սբ Գևորգ		Եվս 1-ը՝ **Սբ Հովհաննեսը**, կիսավեր էր:
16	Նորշեն			Մոտակա **Ֆարխի** (**Ֆըրխի**) և **Օրճ** երբեմնի հայաբնակ գյուղերում պահպանվել էին եկեղեցիների և գերեզմանների մնացորդներ:
17	Ոզմ (Ոզիմ, Ոզմի, Օձում)	Սբ Ստեփաննոս (Սբ Աստվածածին)	1	Եկեղեցին ուներ 3 խորան, որոնցից 1-ում գտնվել են Սբ Ստեփաննոսի մասունքները և «գերեզմանը», իսկ մյուս 2-ում՝ մագաղաթյա «**Կարմիր**» Ավետարան և **Նարեկ** ձեռագիր մատյանները: Ոզմի նորակառույց եռահարկ դպրոցում սովորում էր երկսեռ 100 աշակերտ: Կից կար գրադարան՝ շուրջ 300 կտոր գրքով (ստացել են նաև պարբերականներ): Ավանում պահպանվել էին **Սբ Սանդխտյանց** (**Սանդուխ-յանց**) եկեղեցու ավերակները: Մոտակա լեռան կատարին երևում էր ավերակ **Լուսապտուղ Սբ Սահակ** (քրդ.՝ Dêre Xumar) վանքը, որի կառուցումը ժողովուրդը վերագրում էր **Ատոմ Մոկացի** իշխանի դուստր **Խումարին**: **Ոզմը և** շրջակայքը հարուստ էին բազմաթիվ մատուռ-սրբավայրերով՝ **Սբ Ատոմ**, **Բոլումա (Պոլոմա) Սբ Եղիշե**, **Սբ Դավիթ**, **Սբ Եղիշե** (տարբեր է), **Կարմիր Ավետարան**, **Սբ Հայր Անտոն**, **Սբ Մեսրոպ**, **Սբ Շմշմոնիկ** (**Շմանեկ**, համարվել է ասորական սրբավայր), **Սարի Սբ Գևորգ**: **Ոզմի** շրջակայքում երևում էին մի ամբողջ շարք բերդերի մնացորդներ, ինչը խոսում է Արլ Տիգրիսի գետահովտի պաշտպանության համա-կարգում ավանի ունեցած բացառիկ դերի մասին: Նշանավոր էին հյուսիսում՝ **Մերասուսի**, **Մարամոտի** և **Գումովա**, արևմուտքում՝ **Ամրո-վա**, հարավում՝ **Խլուզենց, Շարավի** և **Սմբիտա** կամ **Սմբատա** բերդերը: 1914 թ. **Ոզմը** Բիթլիսի նահանգի բազմամարդ բնակավայրերից էր (տարբեր տվյալներով 150-200 տուն կամ 1200-1500 բնակիչ): Ուշագրավ է, որ **Ոզմից** դուրս եկած ավելի քան 150 տուն բնակիչները (հիմնա-կանում հաստատվել էին Վանում և շրջակա գավառներում) նույնպես դիտվում էին միևնույն համայնքի անդամներ: Շուրջ 7 կմ հվ-արևմուտք՝ **Մոկաց ջրի** աջ ափին, գտնվող երբեմնի հայաբնակ **Բեդար** կամ **Բիդար** գյուղում պահ-պանվել էր **Սբ Գևորգ** վանքը, ուր ըստ ավան-դության պահվող Սբ Գևորգ Զորավարի մասունքը տեղափոխվել և ամփոփվել էր Մոկսի **Եղերով** (**Աղերով**) լեռան հարավային ստո-րոտին գտնվող **Փութկու Սբ Գևորգ** համանուն մենաստանում: **Բեդարի** մոտ երևում էր ավերակ **Կարմիր դար** (քրդ. Grêsor) բերդը: Շրջակայքի երբեմնի հայաբնակ գյուղերից հայտնի էին **Խնուկը**, **Կեծուկը**, **Սախոտը** (**Յախուտ**) ևն:
18	Պերոզ (Պիրոս)			

19	Ռաբանոկա(ն)	Սբ Աստվածա-ծին (Սբ Սարգիս)		
20	Սարհալ (Սրոխե)			
21	Սանո (Սանու)	Սբ Վարդան		
22	Քերի, Ներքին	Սբ Սիոն		
23	Քերի, Վերին	եկեղեցի		

9) Շիրվան (Շերվանք)

Գավառը գրավում էր **Սղերդի սանջակի** հյուսիս-արևելյան՝ **Արևելյան Տիգրիս-Բոհտան** և վերջինիս **Բաղիշոջուր վտակի** միջագետքում տարածվող լեռնային երկրամասը: Սահմանակցում էր հյուսիսից՝ **Խիզան-Գյավրոներին**, արևելքից՝ **Սպարկերտին** և **Մամռտանքին**, հարավից, **Արևելյան Տիգրիսի հունով՝ Բարվարիին**, հարավ-արևմուտքից՝ **Արվախ-Էրուհին** (**Արարադի** կամ **Զուդի** լեռների հյուսիսային ճյուղավորումներով) և **Սղերդի** տափարակին, իսկ արևմուտքից, **Բաղիշոջրի** միջին հունով (այդ հատվածում կոչվում էր **Բաշորաջուր**)՝ **Խարզանին** և **Մոտկանին**: Կենտրոնը **Քուֆրա** (**Քֆրա**) կամ **Շիրվան-կալա** գյուղն էր **Ազնվաց ձորի** միջին հոսանքի ձախափնյակում բարձրացող **Բաջավան** (<**Բագավան**) լեռնագագաթի հարավ-արևմտյան ստորոտին: 1914 թ. այն ուներ շուրջ 100 տուն բնակիչ, որից 40-ը (450 անձ) հայեր: **Շիրվանի գավառի** տարածքում 16 դ.-19-րդ դ. 1-ին կեսին գոյություն են ունեցել 4 ժառանգական օջաքլրքներ՝ **Բուն Շիրվան** կամ **Շերվի**, **Կառնի** կամ **Կառնրկ**, **Էրուն** կամ **Հիրուն** (վերջին 2-ը՝ հյուսիսում, Կեցան գետի ձախակողմյան **Բրքնովի** օժանդակի ձորահովտում) և **Զորկան** (թրք. Zeriki, գավառի արևմտյան հատվածը կազմող **Բաղիշոջրի** և **Ազնվաց ձորի** միջագետքում): Վերոհիշյալ սահմաններում գավառը ձևավորվել է 19-րդ դ. 80-ական թթ. կեսերին: Մինչև ուշ միջնադար հայ բնակչությունը **Շիրվանի** տարածքում կազմել է բնակչության գերակշիռ մեծամասնությունը, ինչը պարզ երևում է գավառի տեղանունների քննությունից: Ընդորում, այստեղ ևս ապրում էին զգալի թվով այսպես կոչված հայախոս ասորիներ (նեստորականներ): Ինչպես Բարվարիի կապակցությամբ արդեն նշել ենք, դա Սասանյան Պարսկաստանի կողմից 5-6-րդ դդ. իրականացված քաղաքականության արդյունքն էր, ինչը հանդիպում է նաև հարևան **Արվախում**: Շիրվանի տարածքում հայախոս նեստորականների գյուղերը հիմնականում կենտրոնացած էին **Էրունի գավառակում** (**Ավավ** կամ **Հավու**, **Բոթկի**, **Գնձիկ**, **Դերիկ**, **Հալնձե**, **Սաազ**, **Սահրուս** ևն): **Շիրվանի գավառի** հայ բնակչությունը (ներառյալ՝ նեստորականություն դավանողները) ծանր կորուստներ կրեց 1895-1896 թթ. համիդյան ջարդերի ընթացքում, իսկ 1915 թ.՝ գլխովին բնաջնջվեց: Ոչ լրիվ տվյալներով՝ միայն **Էրունի** 9 գյուղերի (**Ավավ**, **Ավին**, **Գնձիկ**, **Հալնձե**, **Նաբային**, **Զում**, **Սահրուս**, **Սերմետ**, **Սիզեռք**) ավելի քան 3000 բնակչից վերապրել էր շուրջ 90 մարդ, հիմնականում՝ կանայք և երեխաներ: Նույնն էր վիճակը նաև **Բուն Շիրվանում** և **Զորկանում**: Մազապուրծ փրկվածները տեղափոխվեցին հարևան **Խիզանի գավառ**, իսկ ն. թ. ամռանը հաստատ-

վեցին Պարսկաստանի **Սալմաստի գավառի** գյուղերում: Սակայն 1918 թ. մայիսին շիրվանցիները ստիպված էին հեռանալ նաև այստեղից՝ գաղթելով Իրաք: 1919 թ. ամռանը **Բաքուբայի** վրանաքաղաքում անցկացված հայ գաղթականների հաշվառման ընթացքում գրանցվել էր ընդամենը 85 անձ **Ավին**, **Գուրենան**, **Դերիկ**, **Սերմետ** և **Սմխոր** գյուղերից: Նշենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին Շիրվանի 3 գավառակները միասին ունեին 7000-ից ոչ պակաս հայություն...

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
ա/ Բուն Շիրվան				
1	Բրրք (Պրքե)	Սբ Սարգիս		
2	Գելին (Կելի)	Սբ Սարգիս		
3	Գոնդեդիզան			
4	Գորինան (Գյոռնան, Կուրենա)	Սբ Գևորգ (Սբ Հակոբ)		
5	Դերբալ (Դերավել)			Գյուղի անունից երևում է, որ մոտակայքում եղել է վանք:
6	Դերիկ (Դերըկ)	Սբ Էջմիածին (նախկին վանք)		Գյուղում կար ևս մի եկեղեցի՝ **Սբ Վարդավառ** անունով (ավերակ էր):
7	Խանդակ			
8	Կարվե	եկեղեցի		
9	Մադան	Սբ Գևորգ		
10	Սոք (Սոլ)	եկեղեցի (ավերակ)		
11	Քյոսախ (Կոսախ)			
12	Քուֆրա (Քֆրա, Շիրվան կալե)	Սբ Հովհաննես		
բ/ Էրուն (Հիրուն)				
1(13)	Ավավ (Հավու)	Սբ Թումաս		
2(14)	Ավին (Հավին)	Սբ Աստվածածին, Սբ Շմավոն		
3(15)	Բոթկի (Պոտկի)	Սբ Աստվածածին		
4(16)	Գնձիկ	Սբ Ստեփաննոս		Գյուղում պահվել են ձեռագիր Ավետարաններ, ինչպես նաև Սբ Աստվածամոր պատկերը կրող մի կոնդակ, որը մինչև Առաջին աշխարհամարտը **Գնձիկ** այցելած ոմն անգլիական հյուպատոս վերցրել էր իր հետ: Եկեղեցուն կից գերեզմանատան մեջ կար մի քար՝ սեպագիր արձանագրություններով:
5(17)	Դերիկ (Դերըկ)	Սբ Եղիշե		
6(18)	Հալնձե	Սբ Թումաս		
7(19)	Մրզրո (Մզրա)	Սբ Ամենափրկիչ		Հիշվում են նաև **Սբ Գևորգը** և **Սբ Վարդանը**:
8(20)	Մրրջ	եկեղեցի (ավերակ)		
9(21)	Նաբային (Նրբին)	Սբ Գևորգ, Սբ Սարգիս		Գյուղում պահվել են մեկ տասնյակից ավելի ձեռագրեր:

10(22)	Պուխ (Պուդ, Պուլ)	Սբ Կիրակոս		
11(23)	Ջում (–ա, ճում)	Սբ Կարապետ (Սբ Աստվածածին)		
12(24)	Սաազ			
13(25)	Սահրուս (Սերուս)	Սբ Գևորգ (Սբ Գորգեզ), Սբ Եղիա (Սբ Իլիա)		Գյուղում կար **Թուխ Մանուկ** սրբավայր–ուխտատեղի:
14(26)	Սերմետ (Սերմերտ, Սեմատար)	Սբ Աստվածածին (Սբ Մարիամ)		
15(27)	Սրմխոր	Սբ Աստվածածին		
16(28)	Սիզեռք (Սեդարս)	Սբ Հովհաննես (Սբ Սիմեոն)		
գ/ Ջոլկան (Ջերիկի)				
1(29)	Բայթարուն	Սբ Հարություն		
2(30)	Դարաբանի (Դարաբուն)	Սբ Աստվածածին		
3(31)	Դերզնի (Տերզին, Ջոլկան)	Սբ Հովհաննես		**Դերզնին** ուշ միջնադարում բազմամարդ բերդաքաղաք էր՝ **Ջոլկանի** գավառի կենտրոնը (կոչվել է նաև **Դեյրազինաբ**): 18–րդ դ. վ.–19–րդ դ. սկ. այն ուներ շուրջ 700 տուն գերազանցապես հայ բնակիչ: Սակայն 1840–ական թթ. բերդաքաղաքը հիմնովին ավերվել է և անշքացել: 19–րդ դ. 80–ական թթ. Դերզնին փոքր գյուղ էր՝ շուրջ 20 տուն հայ բնակչությամբ: Գյուղում եղել են զգալի թվով հայերեն ձեռագրեր, որոնք ամբողջությամբ ոչնչացել են պահպանության տարրական պայմանների բացակայության պատճառով կամ 1890–ական թթ. հայկական կոտորածների ժամանակ: Մի փոքր հս գտնվում էր համանուն կիսավեր բերդը:
4(32)	Կիգան (Քիքան, Կրկանց)	Սբ Աստվածածին	1	Գյուղում պահվել են ձեռագիր մատյաններ:
5(33)	Մնար			
6(34)	Շմիլան	Սբ Աստվածածին		

19–րդ դ. վերջին – 20–րդ դ. սկզբին ամայացած և հայաթափ եղած բնակավայրեր՝ **Զվզիկ**, **Կավիժան**, **Մազորան**:

10) Արվախ–Էրուհ

Գավառը գրավում էր Արևելյան Տիգրիս–Բոհտանի ստորին ավազանի հարավային հատվածը՝ ներառյալ վերջինիս ձախակողմյան **Ջորավա(ն)** վտակի ձորահովիտը: Սահմանակից էր հյուսիսից, Արևելյան Տիգրիսի հունով՝ **Սղերդին**, հյուսիս–արևելքից, **Հարակոլի** բարձրավանդակով և **Կորդվաց լեռների** ճյուղավորումներով՝ **Բարվարիին**, հարավից, **Արարադի** կամ **Ջուդի** լեռնապարով՝ **Դիարբեքիրի** նահանգի **Ջեզիրեի** գավառի **Սլոփիի** գավառակին (հին հայկական «**Բերկրեցւոց երկիր**»), իսկ արևմուտքից, արդեն միասնական Տիգրիսի հունով՝ նույն **Դիարբեքիրի** նահանգի

կազմում գտնվող **Միդիաթի** գավառին (պատմական «**Տուրայ երկիր**»): Գավառի մաս էր համարվում Տիգրիսի Արևելյան Խաբուր վտակի վերին ավազանի արևմտյան հատվածն ընդգրկող **Շառնախի** (**Շերնա**կ) գավառակը (երբեմն հիշվում է Դիարբեքիրի կազմում): 16դ. –19–րդ դ. 1–ին կեսին **Արվախը** (**Էրուհ**, նաև՝ **Արոհ**) մտել է **Զեզիրեի** կամ **Բոհտանի** (քրդ. Botan) կիսանկախ իշխանության մեջ: Ի դեպ, վերջինիս էր ենթարկվում նաև հարևան **Բարվարին**: Հատկանշական է, որ Բոհտանում ևս հայերը զգալիորեն յուրացրել էին քոչվորական կենցաղը և համարվել են Բոհտանի իշխանության քրդերին հավասար անդամներ (այդ մասին խոսում է 16–րդ դ. քուրդ նշանավոր պատմիչ **Շարաֆ–խան Բիթլիսին**): 1840–ական թթ. **Զեզիրեի** հզոր **Ազիզան** տոհմի ներկայացուցիչ Բադրխանի գլխավորած հակաօսմանյան ապստամբությանն ամենագործուն մասնակցությունն են ունեցել նաև **Արվախի** հայերը: 1846–1849 թթ. ընթացքում թուրքական հսկայական բանակը ճնշեց Բադրխանի ապստամբությունը, ինչը խորտակիչ հարված էր ոչ միայն քրդական կիսանկախ իշխանություններին, այլև հայկական մելիքություններին: Այս շրջանից էլ **Արվախ–Էրուհը** և **Բարվարին** վերջնականապես դուրս բերվեցին **Բոհտանի** (**Զեզիրե**) վարչական կազմից, իսկ 1879–ից մտան նորաստեղծ Բիթլիսի մեջ: Նորակազմ գավառի կենտրոնը երբեմնի **Արվախի** (<**Ավերակ**՞) կամ **Էրուհի** (**Արոհ**, թրք. Eski Eruh) բերդի փոխարեն դարձավ **Զորավայի** վերին հոսանքի շրջանում՝ գետակից 10–12 կմ հարավ ընկած **Դեհ** (**Տեհ**, **Տրհ**< պրսկ.՝ dēh – «գյուղ») գյուղաքաղաքը: Վերջինս մինչև 1840–ական թթ. պատմական **Կորդուքի** առավել բազմամարդ բնակավայրերից էր, գրեթե զուտ հայաբնակ (շուրջ 800 տուն կամ 6000 բնակիչ): Տեղի քրդախոս, բայց արիասիրտ հայերը, համատարած զինված էին և հարկ եղած դեպքում պատշաճ հակահարված են հասցրել քրդերի ոտնձգություններին: Ցավոք, 19–րդ դ. 2–րդ կեսին վաչկատուն նորանոր ցեղերի շարունակական մուտքը նկատելի վնաս հասցրեց ինչպես Արվախի, այնպես էլ վերջինիս կենտրոնի հայերին: 1860–ական թթ. մեր կողմից արդեն բազմիցս հիշված, Խիզանում վատ համբավ ձեռք բերած Սաբաթուլլահի և նրա որդի՝ էլ ավելի տխրահռչակ շեյխ Ջալալեդդինի ասպատակությունները հարկադրեցին **Դեհի** հայերի զգալի մասին հեռանալու բնօրրանից (հիմնականում՝ Վան): 20–րդ դ. սկզբին գյուղաքաղաքն ուներ ավելի քան 2500 հայ բնակիչ (300 տուն): **Դեհի** 2՝ **Վերին** ու **Ներքին** թաղերում գործում էին **Սուրբ Աստվածածին** և **Սուրբ Հովհաննես** եկեղեցիները: Վերջինում պահվել է հայերեն ձեռագիր: 1880–ական թթ. գործել են նաև **Սուրբ Լուսավորիչն** ու **Սուրբ Գևորգը**: Եղել են 2 այլ, արդեն ավերակ և ամայի **Սուրբ Աստվածածին** և **Սուրբ Ստեփաննոս** եկեղեցիներ՝ հետևանք 19–րդ դ. քաղաքական վայրիվերումների: Տվյալների պակասը թույլ չի տվել առավել ամբողջական պատկեր կազմելու Արվախի հայ բնակչության տեղաբաշխման, թվաքանակի և հայկական սրբավայրերի մասին: Այն հանգամանքը, որ տեղի տեղանունների շարքում հանդիպում է «դեր» (ասորերեն՝ däyr–«վանք») բաղադրիչը, խոսում է վանքերի գոյության մասին, հնարավոր է՝ նեստորական: Մեզ հասու տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ 1914 թ. Արվախի հայ բնակչության թիվը կազմում էր 5000–ից ոչ պակաս:

Գավառի հայ բնակչությունը բնաջնջվել է 1915 թ. մայիսին՝ Վանից խուճապահար փախչող արյունակզակ Ջևդեթի հրոսակների և վերջինիս միացած թուրք ու քուրդ խուժանի կողմից: Միայն **Դեհի** բազմահազարանոց հայությունից փրկվել են 30 ընտանիք, որոնց իր ավան էր տեղափոխել **Շառնախի** ցեղապետ «**Կարմիր աղայի**» որդին (քրդ. Ağayê sor): Եվս 9 ընտանիք ապաստանել էին **Դարհամ** և **Նվըլան** (**Նիվլա**) գյուղերի քուրդ աղաների մոտ: **Դեհի** ահավոր կոտորածից փրկվել և մազապուրծ Վան են հասել ընդամենը 20 տղամարդ: Ջարդարարները, **Դեհի** շուրջ 100 բնակչի բռնի մահմեդականացնելով, տեղափոխել են մոտակա **Արոհ** գյուղ: Դեհի վերապրած հայերից Իրաքի Բաքուբայի գաղթականների վրանաքաղաքում 1919 թ. գրանցվել էր միայն 5 մարդ: Ինչ վերաբերում է **Արվախի** մյուս բնակավայրերին, ապա անհրաժեշտ տվյալներ պարզապես բացակայում են:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Այնե (Այնի)			
2	Բարաշա (Պարաշա)			
3	Բարեմիա			
4	Բարեվան			
5	Բենկոֆ (Բինգյոլ)			
6	Բինաթ (Պենատ)			
7	Բուզըքրի (Բուսըկոի)			
8	Բսիրա (Պսիրա)			
9	Գըրդարա (Կարդալա)			
10	Գովաշըլ			
11	Գվինաթ			
12	Գվինան (Կուան)			
13	Դաշտալալա(ն)			
14	Դարաբան			
15	Դարհամ (Տարհամ, Դահրամ)			Գյուղում 1506 թ. գրված մի Քաղվածագրքում հիշվում է **Սբ Աստվածածին** եկեղեցին:
16	Դերավետ (Դերավուտ)			
17	Դերգուլ (Տերկուլ)			**Արվախի** առավել բազմամարդ բնակավայրերից էր: 19-րդ դ. վերջին ուներ շուրջ 200 տուն հայ բնակիչ:
18	Դեր Մարդաս			
19	Դեր Շմըշ (Արեգնավանք)			
20	Դրրշավ			
21	Դեհմազրն (Տրհմազրն)			
22	Ջվրնկ (Ջվրնկա Դերշավ)			
23	Թլլե			
24	Լոդե (Լոդկե)			

25	Կիվիկ (Կրվրկ)			
26	Կոտրմսո (Կոտմուս, Կադմոսա)			
27	Հադիդի			
28	Հարկոր (Հարկուլ)			
29	Հլվրլա (Ալելու)	Սբ Գևորգ		
30	Մայդանա			
31	Մերե			
32	Մլյանց (Միլիանիս)	Սբ Աստվածածին		
33	Սներֆա			
34	Շառնախ (Շերնակ)			
35	Շահվալի (Շեխշավալի)			
36	Շերկա(ն)			
37	Շկակա(ն)			
38	Պարես (Պարիս)			
39	Ռամորան			
40	Սալփանա			
41	Սավադի			
42	Սարա-թայթանի			
43	Սարա-ֆուկանի			
44	Սրվիան			
45	Տանձի			
46	Ֆնդրք			

Ծնթ. 20-րդ դ. սկ. սկզբնաղբյուրների և անհրաժեշտ վիճակագրական տվյալների պակասը նկատի ունենալով՝ **Արվախ-Էրուհի** հայաբնակ գյուղերի վերոհիշյալ ցուցակները կազմել ենք նաև 19-րդ դ. վերջին պահպանված տեղեկությունների ընդգրկմամբ:

Summary

HISTORICAL AND DEMOGRAPHIC IMAGE OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE

Part seven: South–eastern districts of Bitlis vilayet

Gegham M. Badalyan

Keywords – Aznvatsdzor, Tatik, Khizan district, Khizan–Gyavrner, Shenadzor, Sparkert, Mamrtank, Upper Karkar, Sgherd city, Barvari, Vozm township, Shirvan Arvakh–Eruh.

The article presents the southeastern administrative units of Bitlis Vilayet: small districts (in Turkish – nahiye) of Bagesh city – Aznvadzor, Tatik, Parkhand, Khultik–Nagia and Shatakh, which were under the direct governor control, the province of Khizan in full (with central districts Khizan–Gyavrner, Shenadzor, Sparkert, Mamrtank and Lower Karkar), sanjak's center with the same name – Sgerd city and Barvar province, Shirvan province, and Arvakh or Eruh under Sgherd's governor control (in Turkish – mutasarrif), where on the eve of the First world war I Armenians made up the vast majority (50% or more). Such administrative units were Aznvatsdzor and Tatik (Baghesh'd central region), as well as Khizan's districts – Shenadzor, Sparkert, Mamrtank. And in Parkhand and Lower Karkar Armenians constituted the majority of the population (above 70%). Unfortunately, in this part of the Bitlis vilayet one could also meet the areas cleared of Armenians that was a result of the influx of new nomadic Kurdish tribes from northern Mesopotamia in the 1st half of the 19th century. The Kurdish national movement, led by Bardkhan in the 1840s, and the Ottoman State's powerful military retaliation in response also played no less negative role. Moreover, it was fatal also for semi–independent Armenian authorities surviving in these areas. As a result, many parts of the provinces Khizan and Tsgherd were filled mainly by Kurds.

Резюме

ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН

Часть седьмая: Юго–восточные уезды Битлисского вилайета

Гегам М. Бадалян

Ключевые слова – Азнвадзор, Татик, область Хизан, Хизан–Гяврнер, Шенадзор, Спаркерт, Мамртанк, Верхний Каркар, город Сгерд, Барвари, округ Возм, Ширван, Арвах–Эруг.

В статье представлены юго-восточные административные единицы Битлисского вилайета: малые округи (тур. - nahiye) города Багеш - Азнвадзор, Татик, Парханд, Хултик-Нагия и Шатах, которые находились под прямым управлением губернатора, провинция Хизан полностью (в состав коего входили центральные округи Хизан-Гяврнер, Шенадзор, Спаркерт, Мамртанк и Нижний Каркар), центр санджака с таким же названием - город Сгерд, и провинции Барвар, Ширван, и Арвах или Эрух под управлением правителя (тур. - mutasarrıf) Сгерда, где в канун Первой мировой войны армяне составляли абсолютное большинство (50% или более). Такими административными единицами были Азнвацдзор и Татик (центральный регион Багеша), а также округи Хизана - Шенадзор, Спаркерт, Мамртанк. А в Парханде и Нижнем Каркаре армяне составляли большинство населения (выше 70%). К сожалению, в этой части Битлисского вилайета тоже встречались области очищенные от армян, что было результатом притока новых кочевых курдских племен с северной Месопотамии в 1-ой половине 19-го века. Не менее негативную роль сыграло в курдское национальное движение во главе с Бардханом в 1840-е годы, и мощный военный ответный удар Османского государства. Притом, это было смертельно также и для полунезависимых армянских властей сохранившихся на этих территориях. В результате всего этого, многие части провинций Хизан и Цгерд были заполнены в основном курдами.